№ 207 ՈՒՐԲԱԹ 20 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ 20 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ № 207

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 բուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ. 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կօպ.
Տպարանի տէլէֆօն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊԻ

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSCHAK".

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի Ց ՄԻՆՉԵՎ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 3 ՌՈՒԲ.
Սկսած 1-ից մինչև հոկտ. 1-ը—85 կ.
Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած.
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն եւ 40 կ. նամակաորոշմ. ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. շուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ.

Յայտարարութիւնների համար պիտի վճարել 1 երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ՝ –20 կ., IV երեսի վրա—10 կօպ.:
Կոկիսից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и К°, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնոյում՝ Большая 38, Պարիզում՝ Площадь Биржи 8

1913 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կունենան բաժանորդավճար 10 բուբլին, ծրիքարտ կը ստանան հետեւեալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կիները», 2) «Մշակի» քառասնամեակ»:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՇՈՒՇԻ—ԵՒԼԱԽ—ՆՈՒԽԻ—ԳՕՐԻՍ

Լ. ԵՒՐՈՆ դեկավարութեամբ ՎԱՐԱԶԵԱՆԻ կազմված կօմիսիօնալիօ-առեւտ. ընկերութիւնը յայտնում է վաճառականներին, մանաւոր անձանց, կուլտուրական, արդիւնաբերական և առեւտրական հաստատութիւններին, որ այդ ընկերութիւնը սեպտեմբերի 15-ից, ի մէջն այլ ձեռնարկութիւնների, Շուշում և Եւլախում կօմիսիոնական գրասենեակներ, բաց է արել: Բոլոր պատուէրները կատարվելու են շուտափոյթ, ճշդութեամբ և չափաւոր վարձատրութեամբ կանխիկ: Դիմել Շուշում և Եւլախում նամակով այսպիսի հասցէով. Въ комиссіонерство Л. Варазова, իսկ հեռագրով՝ Варазову.
(օ.մ.) առ. 776. 15—3

ԹԻՖԼԻՍԱԲՆԱԿ ՂԱՐԱԲԱՂՑԻՆԵՐԻՆ

Թիֆլիսաբնակ ղարաբաղցիներից նրանք, որոնք քաղաքիս բացակայութեան պատճառով չեն ստորագրել հայրենի յօբելեար դպրանոցի շնորհաւորական ուղերձին, այսու հրաւիրվում են շնորհ տանել ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՕՆԸ առ. ժ. 10-ից մինչև երեկ. ժ. 8-ը և ստորագրել:
31. 2—1

412/1912 ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՅՕԲԵԼԵԱՆԸ 1512/912
ՏԱՌԵՐԻ ԳԻԻՏԻ 1500-ԱՄԵԱԿ և 400-ԱՄԵԱԿ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ
Շքեղ հրատարակութիւն բազմաթիւ պատկերներով, տեսարաններով, նկարներով, ԼՈՑՍ ԿԸ ՏԵՍՆԻ հոկտեմբերի 3-ին:
ԳԻՆՆ Է 50 ԿՈՊ.
ԴՐՈՇՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ մինչև սեպտ. 30-ը պատուիրողների համար՝ 1000 հատը—250 ր., 500 հ.—130 ր., 100 հ.—30 ր., 50 հ.—20 ր., 25 հ.—11 ր., 10 հ.—4 ր. 50 կ.: Վճարը կանխիկ: Վերադիր վճարով պատուէրներին պէտք է աւելացնել 50 կ. և ուղարկել պատուէրի 1/3-ականը կանխիկ:
ԴԻՄԵԼ՝ Тифлисъ, БЮРО-ПЕЧАТИ Головинскій 41.
առ. 31. 5—1

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՅՕԲԵԼԵԱՆԸ ԵՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՕՆԴԸ

II

Անցեալ անգամ մենք այն միտքը յայտնեցինք, թէ դպրոցական ֆօնդը, որով հայ ժողովուրդը պէտք է յաւերժացնի ազգային պատմական երկու մեծ պատերը, այն է՝ հայ գրերի գիւտի 1500-ամեակը և հայ տպագրութեան 400-ամեակը, պէտք է լինի համազգային, այսինքն այդ ֆօնդից պէտք է օգտվեն ոչ միայն Ռուսաստանի, այլև Թիւրքիայի և Պարսկաստանի հայոց ազգային-եկեղեցական դպրոցները: Իսկ դրա համար անհրաժեշտ է, որ մեր հարուստները, իրանց առատաձեռն նուէրներով, ժողովուրդը իր լումաներով նպաստեն այդ համազգային ֆօնդի կազմման: Օրինակ, մինը կարող է նուիրել մի որոշ գումար, պայմանով որ նա իբրև անձեռնմխելի պահվի էջմիածնում, իսկ տոկոսիքը իւրաքանչիւր տարի ուղարկվի Միացեալ Ընկերութեան՝ դպրոցների պահպանութեան համար. մի երկրորդը կարող է անել իր նուէրը յօգուտ Պարսկաստանի դպրոցների և այլն: Անդրկովկասի մէջ ապրող ղարաբաղցիները, որոնք, ինչպէս անցեալ անգամ յայտնեցինք, կարող են մի մեծ գումար հանգանակել յօգուտ Ղարաբաղի թեմի դպրոցների, պէտք է այդ գումարը տան դպրոցական ֆօնդին, պայմանով՝ նրա տոկոսները գործադրել այդ դպրոցների համար. Բագուի հարուստները կարող են հանգանակել մի մեծ գումար՝ Շամախու թեմական դպրոցի պահպանութեան համար և այլն: Այնպէս որ՝ համազգային դպրոցական ֆօնդը, գանվելով էջմիածնում, կը լինի այն աղբիւրը կամ դրամարկղը, որտեղից բոլոր հայ կարօտ դպրոցները պէտք է քաղեն և ստանան իրանց պահպանութեան միջոցները:

Օն, ուրեմն, հայ հարուստներ, հայ բարեգործներ, հայ նուիրատուներ, հայ ժողովուրդ, շարժվեցէք, բացէք ձեր քսակները, տուէք ձեր լումաները և կազմեցէք համազգային դպրոցական ֆօնդ, որովհետև հայ ժողովրդի փրկութիւնը միայն դպրոցների մէջն է ամէն տեղ, իսկ այդ դպրոցների թիւը շատ և շատ քիչ է: Համազգային դպրոցական ֆօնդի ստեղծումը կը լինի լաւագոյն ակտը յաւերժացման Համազգային Մեծ Յօբելեանի:

Դրա հետ միասին՝ հայ ժողովուրդը իր բոլոր խաւերով պէտք է լայն կերպով մասնակցէ յօբելեանի տօնախմբութիւններին: Նոյնը պէտք է անեն և ազգային բոլոր կուլտուրական, լուսաւորական, բարեգործական և դպրոցական հաստատութիւնները: Ինչպէս իմացանք, Վեհ. Կաթողիկոսը հրաւէր է ուղարկել բոլոր այդ հաստատութիւններին, թէ Ռուսաստան և թէ արտասահման, հայ հասարակութեան զանազան խաւերին և դասակարգերին՝ վաճառականութեան, արհեստաւորներին, համքարներին, հայ գրողներին, գրականագէտներին, բանասէրներին և այլոց:

Ուրեմն պէտք է Վեհ. Կաթողիկոսի հրաւէրին՝ մասնակցելու Համազգային Մեծ Տօնին՝ արձագանք տալ լայն ծաւալով: Քաղաքների հայ հասարակութիւնները, դասակարգերը, ինչպէս և Ռուսաստանի ու արտասահմանի ազգային հաստատութիւնները պէտք է կամ պատգաւորութիւնների, կամ հեռագիրների և գրութիւնների միջոցով մասնակցեն էջմիածնում կատարվելիք տօնախմբութիւններին հոկտ. 12-ին և 13-ին: Միևնոյն ժամանակ ամէն մի համայնք, դասակարգ պէտք է աշխատէ հանգանակել մի որոշ գումար յօգուտ դպրոցական ֆօնդի և ներկայացնել այդ օրը: Իսկ էջմիածնից դուրս, թեմերում պէտք է նոյնպէս կազմակերպել հանդէսներ, որքան կարելի է շքեղ և փառաւոր, դպրոցների և հաստատութիւնների կողմից և աշխատել, որ ժողովրդի բոլոր խաւերը լայն մասնակցութիւն ունենան այդ հանդէսներին, պէտք է կազմակերպել դասախօսութիւններ, ըեֆերատներ, զրոյցներ յօբելեանի շուրջը: Պէտք է միանգամայն վերացնել, ջնջել գաղափարը այն բոյկոտի, որ անցեալ տարի մի խմբակ, դրդված լոկ կուսակցական նկատումներից, տքնեց քարոզել, թէև անպտղութեամբ: Գուցէ այժմ ևս այդ խմբակը, տեսնելով որ իր ծրագիրը անհաջողութեան է հանդիպել, փորձեր անէ խանգարելու նրա շուքը, բայց մենք համոզված ենք, որ հայ հասարակութիւնը այնքան հասունացած է այժմ քաղաքականապէս, որ թոյլ չի տայ իրան անսալ բանսարկու թելադրանքների:

Հոկտ. 12-ի տօնախմբութիւնը, որ կնքումն է լրանալու մի տարի առաջ սկսված տօնախմբութեան, ոչ միայն ազգային, այլ և կուլտուրական մեծ տօն է պատկառելի իր պատմական մեծ հնութեամբ: Քիչ ազգեր կան, որոնք ի վիճակի լինեն պատմական հնութեան այդպիսի պատկառելի յօբելեաններ ունենալ:

Ուրեմն հայ ինտելիգենցիայի, հայ հասարակութեան, հայ ժողովրդի վրա բարոյական մեծ պարտք կայ մասնակցել էջմիածնում հոկտ. 12—13-ին կատարվելիք տօնախմբութիւններին, ինչպէս և զանազան քաղաքներում և վայրերում կատարվելիք յօբելեանական հանդէսներին և վերածել այդ տօնը համազգային մեծ տօնախմբութեան:

Հ. Առաքելեան

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

«Рус. Сл.» թերթի սեղեկութիւնների համաձայն, Ռուսաստանի և Գերմանիայի միջև աւարտվել են բանակցութիւնները Հայաստանի բարենորոգումների մասին: Ռուսական նախագիծը Գերմանիան ընդունել է: Վերջին խմբագրութեամբ նախագիծը կը ներկայացվի մեծ պետութիւնների վերջնական քննութեան, իսկ յետոյ կը յանձնվի Թիւրքիային:

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՏԱՐՕՆԻՆ

Մուշ, 7 օգոստոս

Նախորդ շաբթուն շատ յուզված վիճակ մը կը տիրէր Տարօնոյ գաւառի Զըխուրի մասը. կրկին սկսեր էր ալան-թալանի հոսանքը գլուխ բարձրացնել. ամէն օր դէպքեր, ցորենի բարդցներ էին որ կայրէին, մարդիկ խումբերով կը թալանուէին: Ցուցումը սաստկացաւ, հայկական բոլոր գիւղերը մասայական դարձան, շատ տեղերէ գիւղովին կրկին գաղթելու շարժումներ ըրին: Մշեցին և Մուշի առաջնորդարանը խստիւ բողոքել սկսան տեղական կառավարութեան մօտ:

Զարիքներու վայրի անուղղակի պատասխանատուն տիրահռչակ հաջի Մուսա և Կասըմ բէյերն են: Բոլորի համոզմունքն այն է, որ առանց այդ բէյերու դրդման՝ ծառէն տերև մը իսկ չի շարժիր:

Կառավարութիւնը երևոյթները փրկելու համար զօրք հանեց այդ կողմը: Առանց սակայն հաջի Մուսա-բէյի գիւղին մօտենալու՝ զօրքը հայ և քիւրդ գիւղերու մէջ տարածուեցաւ և իր անհարկի ծախսերով ծանրանալ սկսաւ խեղճ գիւղացոց վրայ:

Ժողովրդեան մտքերը հանդարտեցնելու համար՝ նախ ձայն ելաւ, որ Կասըմ-բէյը սպանուեր է. յետոյ՝ միևնոյն աղբիւրէն հերքուեցաւ այդ լուրը, և ըսին, որ հաջի Մուսա-բէյն է սպաննուեր իր եղբայր Կասըմ-բէյի ձեռքով: Բոլոր այդ լուրերը, սակայն, անհիմն էին: Զօրքը ետ դարձաւ և հետը բերաւ Հասանօ անունով պարզ աւարակ քիւրդ մը, որ ժամանակին ամբաստանուած է եղեր իբր աւազակացի Մալիասի Ջրաղացի կողոպտողն և այրողը: Հասանօյին հետ ձերբակալուած են և իր երկու ընկերները՝ նոյնպէս քիւրդեր: Ձերբակալուած այդ երեք քիւրդերը, պէտք է նկատել, համեմատաբար երրորդական աստիճանի վնասակար անձնաւորութիւններ են քաղաքտելով Մուսա և Կասըմ բէյերու հետ:

Ցամաքօրէն տարածվուած լուրի մը համաձայն՝ բարձրագոյն կառավարութեան հրամանաւ Պոլիս պիտի երթան հաջի Մուսա և Կասըմ բէյերը: Համոզուած ենք, որ այդ լուրը սուտ է, և պիտի տեսնենք, որ տարիներ կանցնին այսպէս և հաջի Մուսա ու Կասըմ բէյերը կը մնան անյաղթելի տիտաններ նենգամիտ Թիւրք կառավարութեան հանդէպ՝ աւերակելով միշտ Խոյթ լեռնաշղթայի շրջանի հայ և քիւրդ խեղճ երկրագործ գիւղերը, հանելով միշտ «բողոյի» (կաշառքի բաժին, տեսակ մը քիմիսիոն) բաժին մը Մուշի Թիւրք աղավաթներուն:

Մեր նախորդ նամակներէն մէկուն մէջ չէրքէզներու անունը տալով մոռցանք ըսելու, թէ անոնց մասին թէև այժմ քիչ կը խօսուի, սակայն անոնք աւելի վաղի նենգամտութիւն ունին և աւելի արիւնռուշտ են: Չէրքէզներու շարժումը խիստ երկիւղալի է հայ գիւղացիին համար: Դեռ անցեալներն էր, որ մսավաճառ Եսաւի դիակը գտնուեցաւ Աղբունար չէրքէզական գիւղին մօտերը: Երզրումէն Մուշ եկող կարաւանները, վախնալով չէրքէզներէն, թողած են Խնուսի գիծը և մեծ դժուարութեամբ կերթեկեն Վարդօ Բինգէօլի գծով:

Քիւրդերը, մանաւորապէս սասունցիք, աւելի ընչաքաղց են, քան մարդասպան: Ատոր որպէս ապացոյց ըսենք, որ միշտ կը լսենք թալանումներ. բայց սպանութիւնը հազուադէպ է: Անցեալները Մուշի առաջնորդարանի նախկին քարտուղար Մարտիրոսեանը պաշտօնական գործերով շրջակայ գաւառները պտոյտի եղած ըլլալով՝ վերադարձին երբ 2 մշակներով և 2 ջորեհեռով Ծովասարէն կանցնի, սասունցի քիւրդ աւազակներ վրան յարձակելով երկուքն ալ կը կողոպտեն՝ տանելով 2 լիտր մեղր, 3 լիտր չամիչ, նոյնքան ալ կտաւ ու հագուստներ և Մարտիրոսեանին վրայէն կը վերցնեն 370 ղրշ. արծաթ դրամ և մէկ ժամացոյց, կօշիկները և գլխու ֆէսը: Աւարի ընդհանուր գումարն է մօտ 10 ոսկի: Կառավարութեան մօտ եղած դիմումները և բողոքները մնացեր են անհետևանք:

Կը լսենք, որ Մարտիրոսեանը իրերու այս դրութենէ յուսահատ՝ խնդրամատոյց եղած է կառավարութեան՝ իրեն ևս փօլիսութեան պաշտօն տալու: Գործը յանձնուած է Բիթլիսի բարձր կառավարութեան քննութեան:

Վերջերս լուր կայ, որ շուտով պիտի ձեռնարկուի օսմ. պարլամենտի անդամոց ընտրութեան: Այս մասին թէև պաշտօնական լուր մը չկայ. միայն անցեալ շաբթու ներքին գործոց մինիստրութիւնը պահանջեր է Մուշի կառավարութենէն, որ սա շուտով պատրաստէ 25 տարեկանէն վեր եղող անձանց ցուցակները և տեղեկագրէ մինիստրութեան:

Թախիծ

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՀԱՅՈՒՆ ՏՈՒԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ

Ինչպէս յայտնի է, բալկանեան պատերազմին հետևանքով ամենաշատ վնասեց Թիւրքիան և ապա ասոիճանաբար քրիստոնեայ պատերազմիկները. ի մէջ այլոց մենք հայերս ալ աչքառու կերպով ունեցանք մեր վնասի բաժինը:

Թիւրքիան կորսնցուց, որովհետև հակառակ մակեդոնական ժողովրդեան ու յեղափոխականներու յարձակումն գանգատներուն ու պահանջներուն՝ նա չուզեց արդարութիւնը, իրաւանց հաւասարութիւնն և քաղաքակրթութիւնը գործադրել ու մտցնել Բումելիին մէջ: Պատերազմիկ քրիստոնեայ պետութիւնները իրենց անձի ու նիւթի կորստեան չափէն աւելի երկիրներ շահեցան իրարմէ քիչ կամ աւելի տարբերութեամբ: Բայց հայերս ինչ շահեցանք մեր այնքան զոհողութիւններուն դէմ: Ոչինչ. և ընդհակառակը վնասուեցանք: Մեր զօրքերը գացին ու ձրի կռուեցան և սպաննուեցան երկու կողմերէն ալ. մեր Պոլսոյ թերթերն օգնեցին և արձագանգ եղան Թիւրքիոյ դէմ եղած անիրաւութեանց. մեր հարուստները դրամով նպաստեցին շատ աւելի՝ քան իւրանները, համեմատութեամբ իրենց թուոյն (ոչ մի Թիւրք առատաձեռնութիւն չունեցաւ անունով հայ՝ հիւպատոս Յովհաննէսբէյի նման 175,000 բուբլի նուիրելու պատերազմին). և սակայն արդիւնքն ու վարձատրութիւնը սա եղան, որ պատերազմէն դարձող մեր շատ զօրքերը խեղճ մնացած Պոլսէն Ռուսաստան ու Ամերիկա փախան, մեր մամուլն ու ազգը նախատուեցան, հայհոյուեցան և անհաւատարիմ անուանուեցան «Թասֆիրի-էֆքեար» և ուրիշ Թիւրք թերթերէն, մեր հարուստ վաճառականները մասամբ անսկացան Երզրում ու Պոլիս, հայութիւնը խմբովին կոտորուեցաւ Բօդոստոյի և Մարզարայի և սիստեմատիկօրէն Հայաստանի մէջ՝ ինչպէս և զրկուեցաւ նոյն իսկ վիլայէթներու նահանգային ժողովներու մէջ իր թուոյն համեմատութեամբ ներկայացուցիչ ունենալու բացարձակ իրաւունքէն:

Հայուն այս ակնայայտ ու իրական ծառայութեանց հանդէպ Թիւրքիոյ ցուցուցած այդ ապերախտ վերաբերումէն վերջ՝ ինչպէս ուրիշ անգամ պիտի պահանջուի, որ հայն իր սիրտը, կեանքն ու դրամը տայ այս երկրին ու հողին համար, ուր իրեն կը զլացուին մարդկային ամենատարրական իրաւունքները, կեանքի, պատուոյ և ինչքի ապահովութիւն:

Գալով Բուլգարիոյ, որուն օրինակին հետևեցան շատ մը բաներու մէջ միւսները և որուն մենք՝ հայերս մասնաւոր յարգանք ու համակրանք կը տածենք իր յառաջադիմասիրական ձգտումներուն և ընդհանուր կոտորածներու օրերուն Պոլսէն Բուլգարիա ապաստանող հայերուն հանդէպ ցուցուցած մասնակի խնամոց համար, նա ալ չթերացաւ իր կարգին անուղղակիօրէն վնասելու հայուն իր սխալ և ոչ մարդասիրական ընթացքով: Ահա թէ ինչպէս:

Պատերազմի հրատարակման պահուն Ֆէրդինանդին իր զօրքերուն ուղղեալ հրաւէրուղերձին մէջ երկրակալական տենչերով մղած պատերազմին «խաչի ու մահիկի կռիւ» անունը տալով զրգռեց իսլամութիւնը իր հպատակ քրիստոնեաներուն դէմ, որոնց ամենադժբաղդն ու անպաշտպանը հայն էր, և քիչ մնաց, որ ազգովին պիտի կոտորուէինք, եթէ Վեհ. Կաթողիկոսի ճարպիկ դիմումին վրայ չփոխուէր դէպի բարին ռուս կառավարութեան քաղաքականութիւնը՝ հանդէպ հայերուն, չստեղծուէր անուղղակի պաշտպանութիւն մը ու համակրանք մը, զորս բացի ռուս մամուլէն՝ Ռուսիոյ Ցարն իսկ ցուցուց պատասխանելով Թաւրիզի և Ամերիկայի հայոց կազմած միտինգներու կողմէ քաշուած հեռագիրներուն:

Բուլգարիոյ և Յունաստանի կողմէն Սելանիկի և ուրիշ տեղերու մէջ կատարուած հակամարդկային ջարդերն ու վայրագութիւնները շատ գէշ դաս ու օրինակ տուին Թիւրքերուն, որոնք իրենք զիրենք հիմա արդարացուցած կը գտնեն իրենց նախապէս ըրած կոտորածներու գործին մէջ և առթի կը սպասեն քրիստոնեաներու դէմ գրգռուած իրենց զգացումներուն գոհացում տալու համար, ջարդելու իրենցմէ տկար հայերը: Թիւրքին ու քիւրդին համար բոլոր խաչապաշտները միևնոյն են. անոնք խտիր չեն դներ բուլգարին ու հայուն միջև, քանի որ երկուքն ալ միևնոյն Քրիստոսին ու խաչին կը հետևին: Դաւառացի հայերն ալ, ինչպէս մեր սասունցիները, միևնոյն համոզումն ու զգացումներն ունին բոլոր քրիստոնէից ու խլամներուն հանդէպ:

Բուլգարիոյ այդ բիրտ վերաբերումը հայերս մեծ տագնապի մէջ պահեց ու կը պահէ թէ անցեալին, և թէ ներկայիս, և վաղանցի տակ դրաւ մեր ապագայ կացութիւնը, որ պիտի ծանրանայ, երբ Թիւրքիոյ գլխէն վերացուին արտաքին հոգերն ու միջամտութիւնները:

Բուլգարիոյ մի ուրիշ սխալն ալ այն եղաւ, որ նա Աւստրիոյ թելադրութեամբ Ռուսիոյ քաղաքական շահերուն հակառակ վերաբերելով Բալկանի մէջ—ինչ որ զինքը զրկեց բաւականաչափ հողերէ և Էդիրնէէն—շատ գէշ ազդեցութիւն ըրաւ իր պաշտպանին և ազատագրողին վրայ. և հիմա կը վախցուի, թէ Ռուսիա թողու իր նախնիքներուն հետևած ազատագրողի դերը հանդէպ արևելեան ազգաց, ընդ որս և հայերուն, զզուած՝ հետևած ազատագրողի դերը հանդէպ արևելեան ազգաց, ընդ որս և հայերուն, զզուած՝ Բուլգարիոյ կրկնած ապերախտութենէն: Մթթէ Սամբուլօվներու ապերախտ ընթացքը չէր, որ հայկական կոտորածներու ատեն Լօբանով իշխանին ըսել տուաւ թէ՝ «չենք ուզեր Բուլգարիոյ նման ուռեցք մը ալ հանել մեր ձախ կողին վրայ»:

Բուլգարիոյ հայերուս տուած չորրորդ վնասն ալ այն եղաւ, որ նա իր քաղաքագիտական տհասութեան երեսէն Թիւրքիան Էդիրնէի մէջ մտցնել տալով նոր զբաղում մը երևան բերաւ եւրոպական մեծ պետութեանց, և այդ պատճառաւ հայկական հարցը դեռ չլուծուեցաւ և որուն երեսէն հազարաւոր հայեր սպասումներէ վերջ թողուցին ու հեռացան օտար տեղուանք, յուսախաբ ու ընկճուած:

Տեսնենք թէ ինչ պիտի լինի եւրոպական պետութեանց այս բաւական երկար լռութիւնը Էդիրնէի վերագրաւումէն ի վեր: Պիտի պատժե՞ն թէ պիտի ներեն Բուլգարիոյ տգայամտութիւնն ու ապերախտութիւնը: Պիտի հաճի՞ն յանուն արդարութեան փոխարինել հայուն վնասներն ալ, տալով անոր կեանքի, ինչքի և պատուոյ ապահովութիւն, որոնցմէ աւելին չի պահանջեր ազգը:

Մշեցի

Բիթլիս

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
18 սեպտեմբերի

Կ. Պոլիս.— «Համիդիէի» հրամանատար Բէզուֆ-բէյը մեկնեց Եւրոպա յատուկ միսսիայով։

Մինիստրների խորհուրդը որոշեց հիւանդ Բէշիդ-բէյի փոխարէն Աթէնք ուղարկել ուրիշ պատգամաւորի, որ մեկնելու է ուրբաթ օրը։ Քաղաքական շրջանները լաւատեսութեամբ են նայում թիւրք-յունական բանակցութիւնների վախճանին։

Սավօվը Բ. Դրան մէջ խօսակցութիւն ունեցաւ Թալէատ-բէյի հետ Գիւմիւլջինէի մասին։

Կ. Պոլիս.—Ցորդ անձրևների պատճառով Ոսկեղջիւրի և Բոսֆորի մօտի շատ արուարձաններ ջրի մէջ են մնացել։ Կան մարդկային զոհեր։ Ռուսաց դեսպանատունը մասամբ ջուրը ծածկել է։

Վիէննա. — «Նէյէ-Ֆրէյէ-Պրեսսէի» աշխատակցի հետ խօսելիս Պաշիչն ասաց. «Ալբանիայի սահմանները, որ որոշեց Լոնդոնի վեհաժողովը, չեն ներկայանում որոշակի ընդգծված սահմանագծեր, այլ հանդիսանում են սոսկ ծանօթանալու կէտեր, ուստի և մեզ մնում է տեղափոխութեան որոշ ազատութիւն։ Ռազմագիտական անհրաժեշտութեան պահանջով հարկաւոր է պաշտպանողական գիծը հասցնել մինչև Սև-Դրինայի և Ադրիատիկի աւազանը։ Դա բնաւ սահմանների ընդլայնումն չի լինի, այլ միայն շտկումն։ Այդ ցանկութիւնները համապատասխան են նաև Ալբանիայի շահերին»։

Պաշտօնական «Նէյէս-Վիներ-Տագէբլատը» նկատում է, որ Պաշիչը բարեհաճօրէն ընդունվել է արտաքին գործերի մինիստրութեան մէջ, որովհետև Վիէննայում նախազգուշացումն չը կայ Սերբիայի դէմ։ Սակայն խօսք չէ կարող լինել Լոնդոնում որոշված սահմանների որևէ փոփոխութեան մասին։

Լրագիրներում համարեա ամեն օր տեղեկութիւններ են տալվում այն մասին, թէ Բուլգարիան ձգտում է դաշն կռել Թիւրքիայի հետ ընդդէմ Սերբիայի և Յունաստանի։

«Պոլիտիշէ-Կորեսպոնդէնտը» ընդգծում է Թիւրքիայի նրբատեսութիւնը, որ թոյլ է տուել բուլգարներին զօրքեր ու զէնք փոխադրել Թիւրքական երկաթուղագծով։

«Ալբանիշէ-Կոր.»-ի ասելով, Էսադ-փաշան հեռագրել է Վալօնի ժամանակաւոր կառավարութեանը դադարեցնելու իր վէճը կառավարութեան հետ ի նկատի ունենալով Ալբանիայի ծանր դրութիւնը։

Թաւրիզ.—Թիւրքէստանից տեղս բերին ոմն քիւրդի, որ Սալար-ուդ-Դավլէի անուան տակ կամեցել է ապստամբութիւն առաջ բերել շահախնդրական նկատումներով։

Հոմ. — Հասարակական կարծիքը յուզված է Տիրոլի նահանգապետի նոր հրովարտակից, որով պաշտօնագրվում են իտալահպատակ անձինք։ «Տրիբունան» գրում է. «Եթէ Տրիէստի փոխարքայի հրովարտակից ծանր տպաւորութիւն մնաց, այժմ արդէն ստացվում է աւելի ծանրը, որովհետև նոր հրովարտակը հաստատում է կառավարական այն սիստեմը, որպիսին բացէ ի բաց գործադրվում է դաշնակից պետութիւնից իտալացիների դէմ։ Հասարակական յուզմունքը չէ կարող չանդրադառնալ կառավարութեան քաղաքականութեան վրա՝ Աւստրօ-Ունգարիայի վերաբերութեամբ»։

Տօկիո.—«Իօմիուրին» պահանջում է աւելացնել Եապօնիայի ցամաքային ոյժերը Կորէան և Մանջուրիան ձեռքից տանուլ չը տալու համար։

ԽՈՀԵՐ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՍՕՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ 50-ԱՄԵԱՅ ԳՈՅՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ.

(Նուէր Աւգուստ Բէբելի յիշատակին)

III

Քաղաքական մշտատև բէակցիայի մի այնպիսի տիպիկական հայրենիքում, ինչպէս Գերմանիան է, չէր կարող բանւորական շարժումը պարզակվել տրէդ-ունիօնիզմի (պրոֆեսիօնալ միութիւնների սոսկ տնտեսական քաղաքականութեան) նեղ շրջանում, ինչպէս ազատ ու հարուստ Անգլիայի յարաբերութիւնները հնարաւոր դարձրին։ Գերմանիայում բիսմարկեան իւնկերական քաղաքականութիւնը սպառնում էր անգամ գոյութիւն ունեցող կիսատ-թերի ազատութիւնները վերացնելու։ Քանի՞ քանի՞ անգամ մահացու փորձեր է պատրաստել պրուսական պահպանողականութիւնը — իսկ դա նշանակում է ողջ գերմանական-պիսական քաղաքականութեան տոն տուող խստապարանոց կաստան—ըէյխստագի ընտրողական քառանդամ սիստեմի դէմ։ Այսօր իսկ բանւորութիւնը ենթակայ է գործադուլի, կօալիցիայի իրաւունքները կորցնելու վտանգաւոր սպառնալիքների. նա անկարող է մի քաղաքական ժողով գումարել, առանց ոստիկանական հսկողութեան։

Բնական է, որ քաղաքական գժնդակ պայմանների մի այդօրինակ մթնոլորտում չէր կարող մի որևէ Նիբշ-Դունկերեան կամ Շուլցէ-Դելիչի հաշտարար, մանր-բուրժուական պալիատիվ հոսանքը գերման բանւորութեան մէջ աջողութիւն ունենալ։ Աջողութիւն պէտք էր և կարող էր ունենալ մասսայական գնդերը յեղափոխականացնող այն մարքսիստական-սոցիալիստական կուսակցութիւնը, որի նուազագոյն (մինիմալ) ծրագրի ամենակարդինալ կէտերը բաղկացած են քաղաքական պահանջներից։

Հէնց այդ պահանջներն են, որոնք բանւորութիւն գրաւելու և կազմակերպելու կրկնա ագիտացիայի և կրթիչ պրոպագանդայի փառաւոր նիւթեր են ծառայում սօցիալիստ գրողների և գործողների համար։ Բաւական է հնչված խաւերին (դրա տակ հասկացէք և մանր բուրժուազիայի ստորին շերտերը) բացատրել շօշափելի փաստերով, թէ ինչպէս իրանք զրկված են այն բոլոր նորագոյն-քաղաքացիական ծանրակշիռ իրաւունքներից, որոնք վաղուց իրականացած բարիքներ են իրանց հարևան մեծ ազգերի մէջ։ Եթէ ուրիշ շատ կէտեր չը յիշենք, ապա գերման ընկերավարական-ների մղած անհաշտ կռիւը սոսկ այսպէս անուանված «Das persönliche Regiment» (միապետի անձնական, ասել է՝ կամայական բռժիմի) սիստեմի դէմ գումում է ագիտացիայի ամենահաւողալից մօմենտներից մէկը։ Ի՞նչ ունեն և ինչ կարող են ասել սօցիալիստները նոյն սահմանում Անգլիայի և Ֆրանսիայի պրօլետարիատին. մի տեղ միապետը սոսկ իրական մի դեկորացիա է, իսկ պարլամենտը՝ ժողովրդի կամքի հաւաքական ներկայացուցչութիւնը՝ ամեն ինչ. միւս տեղ իրականացած է արդէն ընկերավարականների ծրագրային մինիմումի կարդինալ կէտը՝ հասարակապետական սիստեմը, որի անհատ ներկայացուցիչը (նախագահը) դարձեալ ընտրվում է ողջ ազգի կամքով։ Անշուշտ մէկ թէ միւս տեղ պետութիւնը՝ իր ողջ վարչական մեխանիզմով՝ տակաւին խոշոր բուրժուազիայի դասակարգային կամ ակատար մի մարմին է ներկայացնում։ Բայց հէնց այդ հանգամանքն է, որ, իր հերթին, չափազանց դիւրացնում է պրօլետարիատի պատմական կուռ գործը՝ իր ապագայի յաղթական շանսերով. նա գործ ունի մի միակ թշնամու՝ իր հետ ծնված ու աճած, իր հետ հրապարակ եկած և իրանով գոյութիւնը պայմանաւորած ծայրայեղ հակառակորդի հետ։ Այդ է պատճառը, որ այդ ենման երկիրներում (Անգլիա, Ֆրանսիա, Ամերիկայի Միացեալ Պետութիւններ. այստեղ անտես ենք առնում եւրօպական մանր կապիտալիստական երկիրները) դասակարգային կռուի պլատֆորմը զուսկ է կատարելապէս և նիզակները ճօճվում են միայն իրար հանդէպ ծառացած երկու ախոյեանների՝ բուրժուազիայի և բանւորութեան միջև։ Բացի դրանից, զուտ բուրժուական պետութիւնը, իբրև մտաւորական ոյժերի նորագոյն զարգացման պատմական արդիւնք, անհրաժեշտօրէն—կապիտալիզմի հրամայական թելադրանքով—իրականացրել է քաղաքացիական լայնարձակ ազատութեան և մասսայական իրաւահաւասարութեան գերագոյն սկզբունքները, իբրև հմայն բարիքներ անխտիր ողջ ազգաբնակութեան համար։

Այլ է Գերմանիան (և քաղաքական սիստեմի նոյն տիպին պատկանող բոլոր պետութիւնները Արևելեան Եւրօպայում)։ Այդտեղ միապետը՝ իրան վերապահած հրամայագօր իրաւունքներով և աւանդական հեղինակութեամբ տիպիկական արտայայտիչն է դեռ կանգուն և իշխող այն ֆէօդալական դասի, որի ձեռքն է կենտրօնացած փաստապէս պետութեան դեկը։ Միայն խոշոր բուրժուազիայի հետ է կիսում այդ դասը իր իշխանութիւնը, որովհետև առանց նրա կապիտալի անկարող է ներկայումս մի պետութիւն՝ իր տուեալ նեցուկներով՝ պահպանել իր տիրական դոյութիւնը երկրի ներսում և դուրսը։ Քաղաքացիութեան ստորին խաւերը, բանւորութիւն և գիւղացիութիւն չունեն այն դիրքն ու իրաւունքները՝ քաղաքացիական ազատութեան և իրաւահաւասարութեան հողի վրա, ինչպիսին Անգլիայում, Ֆրանսիայում և Ամերիկայում։ Ուրեմն ինչ իրականացել են այդ երկիրներում յիշածս նուաճումներից, Գերմանիայի և նման երկիրների համար դեռ իրականացնելու արժանի խղճալ է կազմում, դեռ լուծելի պրօբլեմներ են, պետութեան հասցէին ուղղված քաղաքական նոյնքան հրատապ, օրքան և անխուսափելի, կենսական պահանջներ։

Սրանով արդէն ամեն բան բացատրվում է։ Գերմանական ընկերա-ռամկավար կուսակցութիւնը իր պարզած դրօշակի տակ վարդապետում է ոչ միայն պրօլետարիատի դասակարգային ուսմունքը՝ սօցիալիզմը, այլ և աւելի յաճախ և աւելի հուժկու տոնով՝ պարլամենտական տրիբունայից թէ դուրսը, արծարծում և իրականացումն է պահանջում պրօլետարիատի, ինչպէս և ազգի գերագոյն մեծամասնութեան քաղաքացիական ազատ իրաւունքների, իրաւազօր սկզբունքների։ Կարճ՝ պահանջում է պետութեան դեմօկրատականացումը։ Ուրեմն գերմանական սօց.-դեմօկրատական կուսակցութիւնը ստանձնել է ոչ միայն շահագործվող դասակարգի պատմական ազատագրութեան հեռաւոր միսսիան, այլ և, որ աւելի այժմէական է, նա հարկադրված է ընանդրաժեշտօրէն լրացնել հասարակական և քաղաքական կեանքի զարգացման այն խոշոր թերին, որ ժառանգութիւն է անցել նրան բուրժուական վաղեմի լիբերալիզմից և դեմօկրատիզմից։

Կրկնում ենք՝ սրանով բացատրվում է ամեն բան։ Ամենից առաջ այն, թէ ինչու արտաքին ու դժգոհութիւն, բողոք ու դառնութեամբ լի հոգեբանութիւն է տիրում Գերմանիայի ոչ միայն բանւորութեան, այլ և մանր քաղաքացիութեան և գիւղացիութեան ընդարձակ խաւերում ընդդէմ պետութեան և սրա կոթողները համարվող հեղինակութիւնների։ Ապա բացատրվում է այն փաստը, իբրև տրամաբանական հետևութիւն առաջին երևոյթի, թէ ինչու ազգաբնակութեան այդ ստուար շերտերը բուռն ժխորով գալիս անդամագրվում են կամ իրանց կարմիր քուէներն են տալիս այն կուսակցութեան, որը միայնակ, իբրև միլիոնաւոր սրտերից հնչող բողոքների ծառացած ներկայացուցիչը, խիզախ ու աներկիւղ իր շանթահար պահանջներն է ուղղում պետութեան հասցէին և իր համարձակ կռիւը յայտարարում ֆէօդալական, կղերական, խոշոր-բուրժուական, ոստիկանական և զինուորական Գերմանիային, որպէս կանգուն պետութեան տիրող սիւների։

Դրա վրա աւելացրէք այն հանգամանքը, որ կառավարական հաստաբազուկ բէակցիան ոչ միայն յամառում էր իր քարացած տեսակէտի վրա, այլև յանդգնում էր դիմել յարձակողական քաղաքականութեան ժողովրդական շահերի մեծ ու միակ հաւատարմատարի դէմ։ Ցիշեցէք բիսմարկեան բէակցիայի սուր ու հուր տեղացող ձուլարանում կռփված սօցիալիստական բացառիկ օրէնքները 80-ական թուականներին, որոնք ամբողջ 12 տարվայ տևողութեամբ խստագոյն հալածանքներով խորտակեցին պետութեան սահմաններում ամեն բան, ինչ սօցիալիստական անուն էր կրում, ինչ անգամ որևէ կողմնակի առնչութիւն ունէր կարմիր դրօշակի գաղափարի հետ։

Ի՞նչպէս, հալածել ու ճնշել, բանտարկել ու տարագրել, որպէս հասարակ ոճրագործ, ժողովրդական իրաւունքների այն իդէալական ու անձնուրաց մարտիկներին, որոնց «յանցանքը» կայանում է միայն նրանում, որ արիաբար բողոքել են քաղաքացիական լիրաւազրկութեան և կռուել մասսայական հարստահարութեան դէմ. որոնք պաշտել են ազատութեան և հաւասարութեան գաղափարը. որոնք խրոխտ ու համարձակ վերացումն են պահանջել պարզիա իւնկերների ծնունդով և դասային աւանդութիւններով պայմանաւորված արտօնութիւնների։

Հալածել հայրենիքից ժողովրդական այդ և նման իրաւունքների համար մարտնչող մի Լիբկնեխտի, մի Բեբելի, Զինգերի, Աւերի, Բերնշտայնի և այլ բազմաթիւ պատկառելի գործիչների, որոնք անձնական վայելքն ու ընտանեկան բարեկեցութեան հոգսը հասարակական իդէալին զոհաբերելով՝ կեանքի նպատակ դրին՝ մարդկութեան ճնշված հատուածների ազատագրութեան երդուեալ հաւատարմատարները դառնալ։ Եւ ոմ է հալածողը. յանուն ինչի. ինչ դիտաւորութեամբ...

Գերմանիայի քաղաքական առանձնայատուկ պայմանները բնորոշող այս հարցերը, նոյնքան տարրական օրքան և կարևոր, չէին կարող չը շահագրգռել կապիտալիստական շահագործութեան նորագոյն զոհերի ստուարախտ հատուածներին։—Դու ճնշի՛ր ու հալածի՛ր կարմիր թշնամիներիդ, այնու ամենայնիւ նրանք մեր բարեկամներն են, որովհետև մեզ համար են կռուում ու տուժում նրանք...

Սօցիալ-քաղաքական գիտակցութեան ճանապարհի վրա կանգնած աշխատաւոր ժողովրդի այս լռելեայն խոստովանութիւնը՝ կառավարութեան հանդէպ՝ արտայայտվում էր այն շօշափելի փաստերով, որ նա աւելի ու աւելի խոշոր գնդերով էր կազմակերպվում կուսակցութեան մնտեսական (պրոֆեսիօնալ) և քաղաքական բանակներում, աւելի մասսայօրէն ու դեմօնստրատիվ կերպով էր հեղհեղ միլիօններն հասնող իր կարմիր քուէները տալիս ժողովրդի շահերի միակ ներկայացուցիչ և հաւատարիմ պաշտպան կուսակցութեան։

B. Intimus

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՑ ՆԿԱՐԻՉՆ ՈՒ ՆՐԱՆ ԳՆՈՂՆԵՐԸ

Մենք յաճախ զանգատներ ենք լսում, որ հայ հասարակութիւնը չէ գնահատում գեղարուեստը, նա անուշադիր է դէպի իր տաղանդաւոր նկարիչների գործերը։ Մենք յաճախ կարդում ենք Թիֆլիսի հայ թերթերում, որ հայ կրեսոսը անագին գումարով ձեռք է բերում օտար նկարչի արդիւնքը և անտես է անում իր տաղանդաւոր նկարիչ Բաշինջաղեանի կամ մի ուրիշ հայ վրձինի ստեղծագործութիւնը։

Ես կարծում եմ, թէ մեղքը գնողինը չէ։ Ուր հայ կրեսոսը գնում է իր տան պատերը զարդարելու պատկերները, եթէ այդտեղ լինէին Բաշինջաղեանի, Մախոխեանի կամ Ալաջալեանի, Մահտեսեանի գեղանկար պատկերները, նա այդ պատկերներից էլ կը գնէր, որովհետև նա գնում է առանց ընտրութեան. անզարդացած քիմքը գեղարուեստի հրաշալիքները գնահատելու ընդունակութիւնից զուրկ է։

Մի՛ կարծէք, որ հայ գնողը գերադասում է օտարինը հայ վրձինից։ Դա բոլորովին սխալ է. նա աւելի գերադասում է թանգագին շրջանակը, քան բովանդակութիւնը, խայտաբղէտ գոյների փայլը, քան նրանց ճաշակաւոր համադասութիւնը. ուրեմն այլ տեղ է գաղտնիքը, այլ տեղ է թաղված եզան գլուխը։

Այդտեղ մեղաւոր է հայ մամուլը, գեղարուեստական կրիտիկայի բացակայութիւնը, գեղեցիկ արուեստը արծարծող, տարածող ընկերութեան բացակայութիւնը և հայ նրկարիչների՝ իրարից բաժան-բաժան, կղզեացած ապրելու ոչ-ժամանակակից սովորութիւնը։

Մամուլը մեղաւոր է, որովհետև նկարչական մի երկի կամ մի ցուցահանդէսի մասին բաւականանում է մի քանի տող լուր տալով կամ մի անցողակի յօդուած տպագրելով, կամ թէ ոչ, հակառակն է պատահում. եթէ մէկը գովում է, միւսը պարսաւում է և կամ՝ ընդհակառակն՝ գերեզմանային լռութիւն է պահվում։ Երևակայեցէք ձեզ, մեր տաղանդաւոր նկարիչներ՝ Բաշինջաղեանը, Ֆէթվաճեանը մի ամսով, երկու ամսով իրանց նկարները ցուցադրում են, և մամուլը բաւականանում է մի քանի ամսուլ տողեր նուիրելով։

Ընդհակառակն՝ տեսէք ինչ է անում ռուս մամուլը, չեմ ասում եւրօպականը։ Իսկոյն ուղարկում է իր լրատուներին, թղթակիցներին, լուսանկարիչներին, ճաշակագէտ կրիտիկոսներին, և դուք իսկոյն մի ամփոփ տեղեկութիւն էք ստանում պատկերի, ցուցահանդէսի մասին։ Ձեր առաջն է արդէն լուսանկարը։ Նրա նկարագրութիւնը և քննադատութիւնը. սրանցից իւրաքանչիւրը լրացնելով իրար պակասութիւնը, ձեր առաջ պատկերանում է ամբողջութիւնը իր լրիւ կամ պակասաւոր կողմերով։ Վերցրէք «Искра»-ն, և համար չէ անցնում, որ մի նկարի կամ ցուցահանդէսի լուսանկարը չը տայ։ Այնտեղ դուք կը գտնէք և հին կլասիկներին, և մոդերնիստներին, և ֆուտուրիստներին։ Ես միայն «Искра»-ն օրինակ բերեցի. կան հարիւրաւոր օրաթերթեր, հանդէսներ, մինչև անգամ գաւառական հրատարակութիւններ, որոնք բերնէ-բերան գովելով կամ պարսաւելով՝ արթնացնում են հասարակութեան ուշադրութիւնը, լարված հետաքրքրութիւն են առաջ բերում և այդպիսով կրթում են հասարակութեան գեղարուեստական ճաշակը։

Օրքան ուզում էք հակառակեցէք ասածներիս, սակայն ես կասեմ, թէ մեծ նշանակութիւն ունի մի գեղարուեստական երկի մասին խօսելն ու գրելը։ Ինչու այդքան մեծ ժողովրդականութիւն ստացաւ Շանթի «Հին Աստուածները». մթթէ նրա համար, որ ամենքը հասկացան ու իսկոյն գնահատեցին։ Ո՛չ, որովհետև նրա մասին շատ գրեցին, մի խօսքով՝ շատ զբաղվեցին։ Մենք ականատես էինք, թէ ինչպէս շատերը առանց կարդալու, առանց ներկայացումը տեսնելու, գլուխ պատռելով՝ «Հին Աստուածներ» էին պոռում։ Ինչու, որովհետև մեր մամուլը մի չը տեսնված եռանդ ցոյց տուեց «Հին Աստուածները» հասարակութեան սեփականութիւն դարձնելու։ Փորձեցէք նոյնը անել մի ցուցահանդէսի, մի պատկերի մասին, և դուք կը տեսնէք, որ նոյն ազնորութեամբ ու ուշադիր վերաբերմունքով կը ընկնվի հայ ժողովուրդը։

Երկար կանգ չեմ առնի գեղարուեստական կրիտիկայի մասին։ Իսկապէս չունենք կիրթ ճաշակի տէր, գեղարուեստին հանրածանօթ, աշխարհահռչակ պատկերահանդէսներն ու պատկերասրահներն ուսումնասիրած ու դիտերած անձեր, որոնք կարողանային լուրջ պատրաստված պաշարով առաջ գալ որպէս քննադատներ։ Այդ դուցէ կարող էին անել իրանք՝ նկարիչները. սակայն դրանք իրար ցուցահանդէսներն անգամ չեն այցելում, ուր մնաց որ իրար անաչառ քննադատներ հանդիսանային։

Հայ ժողովրդին իր նկարիչների հետ կապելու, նրանց գեղեցիկ գործերի հետ ծանօթացնելու և առհասարակ ժողովրդի ճաշակը զարգացնելու համար մնում է մի գեղեցիկ միջոց. այդ այն է՝ հիմնել հայ նկարիչների մի ընկերութիւն, աւելին ասեմ՝ կովկասեան գեղարուեստը տարածելու մի ընկերութիւն, որի նպատակը լինի հնարաւոր միջոցներով տարածել, ժողովրդականացնել գեղեցիկը ճանաչելու և գնահատելու գաղափարը։

Ասած է. «Մաչը տէրը կը զօրացնի»։ Իւրաքանչիւր արուեստագէտ ինքը պիտի ցուցադրէ իր արդիւնքը, արհեստանոցի չորս պատերից դուրս հանէ ու ժողովրդին ծանօթացնէ։ Այդ տիպի ընկերութիւնը թող կազմէ իր նկարիչների գեղեցիկ նկարների ալբօմներ, հրատարակէ վիմատիպ պատճէններ, կազմէ ցուցահանդէսներ ոչ միայն Թիֆլիսում կամ Բաքուում, այլ և գաւառական զանազան կենտրօններում։ Ձէջ խանգարի մեր հայրենիք Կովկասի հրաշագեղ տեսարաններով զարդարած պօստ-կարտեր անգամ հրատարակել։ Դուք մտէք մեր գիւղացու խրճիթը, հասարակ քաղաքացու ընակարանը. ինչով են զարդարված նրա անշուք պատները։ Անբովանդակ, անիմաստ «լուբօչնի» կոչված ռուսական հրատարակութիւններով, «Բօվա Կօրոլևիչների» ֆանտաստիկ նկարներով, էլ չեմ յիշատակում դժոխքի տեսարանները, բաց սրունքներով ու կրծքով կանացի պատկերները և այլն։ Իսկ ովքե՞ր են մեր կրեսոսները. վերոյիշեալ անճաշակ, անմիտ գեղարուեստական տակնքներով, մրուրով զբաղվող ու սընվողների հարստացած հայրերն ու եղբայրները։ Ուրեմն ինչ զարմանք, եթէ մի տաղանդաւոր Բաշինջաղեան, մի Ֆէթվաճեան չեն գնահատվում մեր հարուստներից։ Բաւական չէ լինել հարուստ գրպանով, այլ հարուստ խելքով, ճաշակով, իմացականութեամբ. այն ժամանակ միայն իր արժանի գնահատութիւնը կունենայ հայ գեղարուեստը, նկարչութիւնը։

Կոպիտին կոպիտ անուանելով, տգէտին տգէտ, այդպիսով ցաւը չէ բուժվի, այլ արմատական միջոցների պիտի դիմել։ Իսկ այդ արմատական միջոցները ստեղծողներ պիտի լինեն մեր մամուլն և իրանք՝ մեր նկարիչների սերտ ընկերութիւնը։

Գ. ք. Մկրտումեան

Ա ս տ ր ա խ ա ն

ՍԱՌՑԱԿԻՐ ԳՆԱՑՔ

◆ Երէկ, սեպտեմբերի 19-ին տեղի ունեցան մի շարք հետաքրքրական գործողութիւններ վերաբերեալ սառցային գնացքին, որ կազմակերպվել է դէպի մայրաքաղաք տանելու ուտեստի մթերքներ։ Վաղ առաւօտեան երկաթուղու կայարանում ինժեներներ Գրօդէն և Զաբօչենցեվ ցոյց տուին հասարակութեան զանազան սիստեմի սառը վագոններ։ Ցետոյ Նաւթուղի կայարանի մօտ Թիֆլիսի նոր սպանդանոցում վագոնները լցվեցին մթերքներով, որոնք մինչև այդ դետեղված էին սառցարաններում։ Նորից մոթվեց 50 գլուխ ոչխար, մեծ մասամբ թուշի տեսակի։ Մրգերի մեծագոյն մասը լաւ վիճակի մէջ է։ Փոքր ինչ վնասվել է Քուրայխի նահանգից բերված միրգը։ Միսը շատ լաւ վիճակի մէջ է և չէ փչացել, թէպէ արդէն 8 օր է, որ կենդանիները մոթված են։ Մի քանի անձեր լուրեր էին տարածել, թէ միսը սկսում է փոխվել. բայց մանրամասն քննութիւնը ցոյց տուեց, որ դա բոլորովին սխալ և անհիմն մի տեղեկութիւն է։

◆ Այսօր ցերեկվայ ժամը 1-ին Թիֆլիսից սառցակիր գնացքը կուղևորվի դէպի Պետերբուրգ։ Նա ճանապարհին կը լինի մօտ 8 օր։ Մի քանի խոշոր կայարաններում նա կանգ կառնի։ Ճանապարհին մի քանի տեղերում նա ընդունելու է մրգեր և ուրիշ մթերքներ։

◆ Սառցակիր գնացքի հետ դէպի մայրաքաղաք ուղևորվեցին Թիֆլիսի սառցարանական կոմիտէի անդամները, ինժենէրներ, գիւղատնտեսներ, որպէսզի մանրամասնօրէն հետևեն, թէ ինչ վիճակի մէջ են մթերքները հասնում Պետերբուրգ, ինչ ընդունելութիւն են ցոյց տալիս այնտեղի վաճառականները և թէ ինչ միջոցներով կարելի է նպատակայարմար եղանակով կազմակերպել սառցակիր գնացքների կանոնաւոր երթևեկութիւնը։

Ն—ն

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Պետ. Դումայի պատգամաւորները Սղնախում

Սղնախ, 15 սեպտեմբերի

Անցեալ շաբաթ հիւր էին Սղնախում Պետական Դումայի սոց.-դեմօկրատ պատգամաւորներ Զխէիձէն և Սկօբոլևը։ Նրանք նախ գնացին Ալազանի միւս կողմը՝ ռուս նոր գաղթականների դրութիւնը ուսումնասիրելու համար, ապա վերադարձան Սղնախ։ Սկօբոլևը երկրորդ օրը գնաց Թիֆլիս, իսկ Զխէիձէն մնաց Սղնախում։

Նա այցելեց Նուկրիանի, Ճօտօրի և Մաղարօ գիւղերը և խորհրդակցեց ընակիչների հետ։ Վրացի ինտելիգենցիան պատուեց Զխէիձէին ընթրիքով, որտեղ պատգամաւորն արտասանեց ճառ, պարզելով իր հայեացքները քաղաքային և այլ կուլտուրական գործերի մասին։ Զխէիձէն խոստացաւ աջակցել հետևեալ հարցերի մասին. 1) Կախէթիի գիւղացիների դրութիւնը, 2) Թամար թագուհու ջրանցքի վերանորոգութիւնը Ալազան գետից, 3) Գիւղատնտեսական միջնակարգ դպրոց հիմնել, 4) Անջատել Ճօտօրի, Նուկրիանի և Մաղարօ գիւղերը Սղնախից, դարձնելով անկախ գիւղեր։

N. N.

Աւստրիական մամ

Զաքաթալա, 10 սեպտեմբերի

Այսօր հայոց գերեզմանատունը հողին յանձնեցին Զաքաթալայի հայոց եկեղեցականական դպրոցի II դասատան աշակերտուհի 12 տարեկան Սաթենիկ Մկրտչեան Օհանեանի մարմինը։

Խեղճ օրիորդը 5—6 օր հիւանդութիւն քաշելով տաքի վրա՝ երբ իրան շատ վատ է զգում, խնդրում է տանել իրանց պարտէզը, ուր կտակում է ծնողներին իր բոլոր հանդերձն ու դասագրքերը բաժանել իր չքաւոր ընկերուհիներին, ապա՝ վերադառնալով տուն՝ կէս ժամից աւանդում է հոգին։

Մեր նոր ուսուցչ. խումբը յարգել էր իր ներկայութեամբ հանդուցեալ աշակերտուհու յիշատակը, թաղմանը գալով։

Սօյզդէ

Նորութիւններ Շուշուց

Շուշի, 15 սեպտ.

Ահա երրորդ օրն է, ինչ եղանակները կրկին ամպած են։ Անձրևները մի քանի գիւղօրայքում բաւական վնաս են հասցրել։

Սէլ ու սուն և կարկուտը քշել տարել են մի քանի ջրաղացներ և մի քանի գիւղացիներ՝ ապրուստի միջոցներից ու կենդանիներից զրկել։

Տեղիս քաղ. ինքնավարութիւնը մի քանի յայտնի փողոցներում շինել է տուել գազային լապտերներ՝ գիշերային լուսաւորութեան համար։

Քաղաքիս ակիրանոցը շուտով կը տեղափոխվի զբօսավայրից դէպի քաղաքի ներսը։

Առաջիկայ հոկտեմբերից կը սկսվեն գաւառիս և քաղաքիս նորակոչ զինուորների ընտրութիւնները։ Արցախեցի

—

Գիւղացու ցաւից

Ծաղկունք (Նոր-Բայազ. գ.), 10 սեպտ.

Այս տարի գարունը թէև անցաւ աջող, բայց յունիսի և յուլիսի սարսափելի երաշտը մի կողմից, դրան հետևող կարկուտը միւս կողմից, իսկ մուկն էլ երրորդ կողմից՝ մեր գիւղացու յոյսը բոլորովին կըտրեցին հանդից։ Եւ նրա միակ յոյսը մնաց՝ օտար երկրում աշխատող իր որդու վրա։ Բայց որպէսզի մեր գիւղացու դժբաղդութիւնը կատարեալ լինի, ահա թէ բաղդն ինչպէս է պակում նրա յետին յոյսը։ Մեր գիւղի ծերուկներից մէկը՝ սրանից մի-երկու օր առաջ ինձ մօտենալով՝ խնդրեց, որ իր ձեռքին եղած մի նամակը, որ Բալախանում գտնվող իր որդուց էր ստացվել, կարդամ իրան։ Եւ ես ահա թէ ինչ կարդացի.

«Սիրելի հայրիկ, ստացայ քո ուղարկած նամակը. դու գրում ես, թէ հաց չը կայ, փող հացնեմ, որպէսզի քաղցած չը մնաք։ Ահա 4 տարի է, ինչ ես Բալախանումն եմ, և աչքերս կանաչեցին «սուքան» քաշելով։ Ես այս տարի մտադիր էի գալ տուն, բայց որ հաց չը կայ՝ կը մնամ դարձեալ մի տարի։ Սիրելի հայրիկ, առ այժմ փող չունեմ, որ ուղարկեմ, քանի որ այս մի ամիս է, ինչ բանուորները բոլոր գործարաններում գործադուլ են արել, և մենք անգործ ենք և հացի փողի կարօտ...»։

Ի լուր իմ կարդացած նամակի և ի տես յանկարծակի տեղացող յորդահոս անձրևի՝ ծերունին դառն հառաչեց, և նրա աչքերից մարգարիտի նման արցունքներ կաթեցին։

Մկրտիչ Բարսեղեան

—

Փոխադարձ վարկի ընկ. գործերից

Հին-Նախիջևան, 13 սեպտեմբերի

Հին-Նախիջևանի փոխադարձ վարկի ընկերութեան մէջ այս երկու տարի է՝ գործերը կանոնաւոր ընթանում են միայն ձևականապէս, իսկ փաստօրէն կատարվում են զեղծումներ, ապօրինութիւններ սուսիկ փուսիկ։ Ընկերութեան անդամների մեծ մասը՝ թէ հայ և թէ թուրք՝ դժգոհ են վարչութիւնից և խորհրդի հայ անդամներից, որոնք կամայականութիւնը օրէնք են դարձրել, խնամիութիւնը՝ առաքինութիւն։ Այս անգամ փոթորիկը ընկերութեան գլխին անխուսափելի է։ Այդ զգալով, վարչութեան և խորհրդի անդամները նախօրօք հրաժարական են տուել, ուստի նշանակված է սոյն ամսի 22-ին արտակարգ ընդհանուր ժողով։

Պէտք է յուսալ, որ առաջիկայ ժողովում կընտրվեն վարչութեան և խորհրդի աւելի բարեխիղճ անդամներ և ոչ թէ բիւրոկրատներ ու ֆօրմալիստներ։ Ա. Ե.

—

ՇԱՄԱԽՈՒ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Շամախի, 10 սեպտ.

Շամախու գլխաւոր նորութիւնը ի հարկէ թեմական դպրոցի սկզբնաւորութիւնն է։

Դեռ Խորէն եպիսկոպոս Ստեփանէի ժամանակ խօսում էին Շամախու թեմական դպրոցի մասին. եղել է հանգանակութիւն. ժողովել են մի գումար. բայց այժմ չը կայ այդ գումարը. միայն խօսում են ստորագրման թերթի մասին, որ այժմս գտնվում է Բաքուի մի հարուստի մօտ։ 1907 թ-ից ներկայ թեմական առաջնորդը գրագրութիւն է սկսել թեմական դպրոցի մասին։ Հանգուցեալ հայրապետից լիազօրութիւն է ստացել թեմական դպրոցի ծրագրի մշակմանը անցնել և այդ առիթով անմիջական բանակցութիւնների մէջ մտնել Կովկասի փոխարքայի հետ։ Թեմականը լիազօրութիւն է ստացել և ծխական դպրոցը չորս-դասեանի վերածել։ Այս սեպտեմբերից միայն հնարաւոր եղաւ թեմական դպրոցը բացված յայտարարել և աշակերտներ ընդունել։ Առ այժմս կան առաջին և երկրորդ դասարաններ։ Կան մօտ 50 աշակերտ, որոնք եկել են գլխաւորապէս Սաղլինի վանական դպրոցից։ Ուսուցչական կազմը բաղկացած է երեք հոգուց. դերմաներէն լեզուի համար ժամանակաւոր կերպով հրաւիրված է մի գերմանուհի։ Սպասում են ձայնագրութեան ուսուցչին։ Դասատուութիւնը կատարվում է կօնսիստօրիայի առաջին յարկի երեք ազատ սենեակներում. անյարմար դասարաններ, ինչ ասել կուզէ։ Թեմականը ձեռնարկելու դպրոցի սեփական շէնքի կառուցմանը։ Արդէն կայ յարմար հողաբաժին. խոժենէր Սարգսեանը կազմել է յատակագիծը, սրբազանը սպասում է դրամական միջոցների, որպէս զի գործն սկսէ։ Առ այժմս կայ 11 հազար ռուբլի. բայց պարզ է, որ այդ գումարը բաւական չէ. հարկաւոր է 60—100,000 ռուբլի։

Ահա գլխաւոր նորութիւնը։

Մի-ս նորութիւնը՝ ծխական դպրոցի IV բաժանմունքի փակելն է և ուսուցչական նոր կազմը։ Միջոցների սղութեան պատճառով, հոգաբարձութիւնը փակել է IV բաժանմունքը և երկդասեանը վեր է ածել մի-դասեանի, թոշակները վերացրել է. դրա համար էլ աշակերտների մեծ համագումար է սկված. կայ 110 աշակերտ. մինչդեռ միւս դպրոցները շատ նոսր են։ Եկել են նոր ուսուցիչներ, շատ բաներով տարբեր նախորդներից։

Այստեղ հերթական նորութիւն է համարվում և այն դատաւորութիւնը, որ երէկ, սեպտեմբերի 9-ին, քննվում էր տեղական հաշտարար դատաւորի մօտ. Նա հոգևոր կօնսիստօրիայի ատենադպրի և ըէալական դպրոցի հայոց լեզուի դասատուի ընդհանրումն է։ Այս միջադէպը ունի որոշ հասարակական նշանակութիւն, և պէտք է որ նրա մասին խմանա և Շամախուց դուրս։ Ըէալական դպրոցի ուսուցիչը՝ Կ. Բաղրամեան դատի է կանչել կօնսիստօրիայի ատենադպիր Բ. Տէր-Գրիգորեանին, ծեծի համար, իսկ վերջինս դատի է կանչել առաջինին՝ հասարակութեան մէջ վիրաւորանք հասցնելուն համար։ Դատարանը երկուսին էլ պատժեց, առաջինին 2 շաբաթ բանտ, միւսին 15 ր. տուգանք։ Այս գործում ամենից հետաքրքրականը միջադէպի պատճառներն են։ Բաղրամեանը մի շարք թերթերում թղթակցութիւններ է գրում, և բոլոր թղթակցութիւնները պատվում են մի հարցի շուրջը՝ Շամախու թեմական անգործունէութեան, ապականութեան մասին։ Բացի «Մշակից» Կովկասի բոլոր հայ թերթերը այդ մարդուն տեղ են տուել՝ իր միալար թղթակցութիւնները զետեղելու համար։ Եւ իւրաքանչիւր այդ թղթակցութեանը յաջորդել է պաշտօնական հերքում. այդ հերքումները գրել է կօնսիստօրիայի ատենադպիր Տէր-Գրիգորեանը. այդ հերքումներից յետոյ Բաղրամեանը թողել է այն թերթը, ուր առաջ գրել էր, և դիմել է միւս թերթերին, կրկնելով միևնոյն բանը. այսպէս՝ աղատամիտ համարվող «Հօրիզոնից» նա դիմել է «Հովիտին», ապա «Բաքուի Ձայնին» և վերջերս Մոսկվայի «Մարտին»։ Սկզբունք և համոզմունք ունեցող տալով, Բաղրամեանը իր idée fixe-ն է ամեն տեղ առաջ տարել՝ թեմականին տեղից շարժելը։ Վերջերս էլ երբ «Մարտում» է տպում իր նամակները, տեղի է ունենում սեպտեմբ. 1-ի ծեծը. երկուսը յարձակվում են իրար վրա, ձեռնափայտով իրար գլխի հարուածում և վիրաւորական խօսքեր ասում։ Բաղրամեանը խօսքով վիրաւորում է Տէր-Գրիգորեանին, նրա՝ փողոցով անցնելիս, հասարակութեան մէջ։ Ահա այս ընդհարման դատաւճիռն էր, որ երէկ դատարանի դահլիճ էր ժողովել Շամախու հայ մտաւորականներին։

Վ. Թռչունի

—

ԶԱՆԳԵԶՈՒՐԸ ԵՒ ՂԱՓԱՆԸ ԳԱՂԹՈՒՄ ԵՆ

Եւլախ, 8 սեպտեմբերի

Նաւթային աշխարհի վերջին մտահոգիչ գործադուլը գաղթականութեան լայն գուն է բացել Զանգեզուրի և Ղափանի շրջանում։

Այդ գործադուլը այնքան է գրգռել հողազուրկ գիւղացիութեան ախորժակը, որ զարմանցիք մինչև Շուշի և Եւլախ ոտքով են գալիս մինչև երկաթուղու գիծը։

Շուշուց մինչև Եւլախ ճանապարհի վրա շարան-շարան ոտքով անցնում են խումբ-խումբ մարդիկ մի-մի ցուպ ձեռներին և մի փոքրիկ հացի պարկ մէջքներին։ Այդ «ճանապարհորդները» անցնող կառքերի, դիլիժանների կառապաններին աղաչում պաղատում են իրանց նստեցնել կառքի «կօզլին» կամ դիլիժանսի կոտրին և խոստանում են մի քանի շահի մինչև առաջիկայ կայարան։ Այն կառքում, որի մէջ ես էի նստած, կային նաև վեց զարմանցիք Ճարկատ գիւղից։ Դրանցից մէկը կը լինէր 30—32 տարեկան, իսկ մնացեալ հինգը 12—17 տարեկան։

Բաւական հարց ու փորձից պարզվեց, որ դրանք իրանց կեանքում ոչ մի անգամ Բաքու չեն եղել, բայց գործադուլի ձայնը լսելով, և լսելով որ նաւթահանքերից բանուորներին հեռացնում են, իրանք շտապում են աշխատանքի։

— Ո՞ւր և ինչու էք գնում,—ասում եմ նրանց.—ո՞վ պիտի ձեզ գործի գտնէ, ո՞ւմ վրա յոյս ունէք. չէ՞ որ մինչև գործի մտցնելը, որ կարող է ամիսներ տեւել, ձեզ ապրելու միջոց է հարկաւոր, մինչդեռ ճանապարհի ծախսից զուրկ էք...

Իմ այդ հարցերից պարզվեց, որ այդ վեց հոգուն առաջնորդողներից մէկը, որ եօթներորդն է, լաւ ծանօթ է Բալախանիին և նա պայմանաւորվել է վեցի հետ, որ նրանց տանէ, գործի դնէ, ստացած ռոճիկից իրան էլ մաս տան։

Որքան հասկացնում էք, «որ գործադուլ չը կայ, ամենքը իրանց տեղերում աշխատում են, աւելորդ է ձեր գաղթը, հողից, հայրենիքից ձեռք մի քաշէք, նաւթաշխարհը ձեզ մշտական հաց չէ կարող տալ», և այլն և այլն, ոչ մի խօսք, իրատ չէ ազդում այդ ողորմելիների վրա։

Եթէ այդպէս շարունակվի՝ 2—3 ամսում այդ շրջանների երիտասարդ ոյժերը մինչդամայն կը դատարկվին։

Շատ պարզ է, որ դրանք նաւթաշխարհ հասնելով, մի քանի ամիս պարապ մնալով, «ախ հայրենիք, ջան գիւղի թաժա հաց» ասելով պիտի արտասվեն, բայց ներկայումս չեն հասկանում։

Մեծ պարտականութիւն կայ այդ շրջանի քահանաների, ուսուցիչների վրա. դրանք պիտի հասկացնեն, որ նրանց ապագան ժպտուն չէ, կորստեան ուղին են բռնում։

«Մշակը» լայն մուտք ունի այդ շրջաններում, եթէ չեմ սխալվում գիւղական քահանաները մի քիչ էլ գրագէտ պիտի լինեն. մինթէ չեն կարող իրանց կարգացածը հասկացնել, բացատրել գիւղացիներին, որ նրանք իրանց 12—17 տարեկան պատանիներին նաւթաշխարհն ուղարկելով միևնոյն է թէ ուղարկում են Սօդոմեան սպանդանոց...

Ս. Գարագաշ

—

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Ներկայումս Բաքուն է Կովկասի հայ ազգաբնակութեան պատգամաւոր երդուեալ-հաւատարմատար Միքայէլ Պապաջանեանը, որ զբաղված է հարկաւոր նիւթեր ժողովելով, վերաբերեալ հայկական հարցին։ Պապաջանեանը մտադիր է մի քանի օրից յետոյ մեկնել Բաքուից, ձեռնարկելով ճանապարհորդութեան հայկական գաւառներում։ Սեպտ. վերջերին նա կը մեկնէ Պետերբուրգ՝ Պետական Դումայի նստաշրջանին մասնակցելու համար։

◆ Բարձրագոյնս հաստատվել է այն օրէնքը, որի համաձայն պետական գանձարանից 200,000 ռուբլի է յատկացվում Իգդիր—Կարակալա և Իգդիր—Զէնգիլի շրջանում խճուղիներ կառուցանելու համար։

◆ «Բեկ»-ի ասելով, Վրաստանի էկզարխի պաշտօնի համար ներկայացվելու է Մօսկվայի թեմի առաջնորդ Տրիֆօնի և Եարօսլաւլի արքեպիսկոպոս Տիխոնի թեկնածուութիւնը, եթէ այդ մասին իր համաձայնութիւնը տայ Կովկասի փոխարքան։

◆ «Зак. Рѣчь»-ում կարդում ենք մի այսպիսի տարօրինակ լուր. «Այս օրերս տեղական ուսուցիչներից մէնի մայրը մեռաւ։ Նա դիմեց տեսչին հնարաւորութիւն տալ իրան տուն գնալու, իսկ աշակերտներին արձակել 4-րդ դասից։ Բայց տեսուչը կարուկ կերպով պատասխանեց. «Ես չեմ կարող երեխաներին արձակել ձեր մօր մահվան պատճառով»։ Դժբաղդ ուսուցիչը հարկադրված է եղել մնալ մինչև պարապմունքների վերջը»։

◆ Մեզ տեղեկացնում են, որ Կարա-Դարվիշը ռուսերէնի է թարգմանել Շանթի «Հին Աստուածներ» դրաման և ներկայացնելու է Մօսկվայի Գեղարուեստական թատրոնի վարչութեանը։

◆ Այսօր Վրաց Պատմութեան Ընկերութեան նիստում Գօրգաձէն կարդալու է բիֆերատ Վրաստանի պատմութեան մասին մինչև VI դարը նախ քան Քրիստոս։

◆ Վերադարձաւ ու ստանձնեց իր պարտականութիւնները Թիֆլիսի վաճառականական աւագ Արբ. Մելիանը։

◆ Թիֆլիսում դիզէնտերիա հիւանդութիւնը թուլացել է։

◆ Թիֆլիսի նահանգապետը քաղաքային վարչութեան ուղարկել է «Зак.» թերթի մի տեղեկութիւնը՝ քաղաքային վարչութեան այն ապօրէնի գործողութեան մասին, որ կայանում է հեռախօսում. վարչութիւնը առանց դումայի սանկցիան ստանալու կատարել է քաղաքային հողերի փոխանակումն։

◆ Օզուրգէթի գաւառապետ Զակուսովը հեռացվել է իր պաշտօնից, որովհետև նրա դէմ յարուցված է քրէական դատ։

◆ Թիֆլիսի էլեքտրաքարշի ծառայողների անտեսական պահանջները քննելու համար Բրիւսէլից եկել է անօնիմ ընկերութեան ներկայացուցիչը։

◆ Անդրկովկասի Հայուհեաց Որբանոցի Ընկերութեան վարչութիւնը խնդրում է մեզ յայտնել, որ նա շնորհակալութեամբ ստացաւ կոյս Աննա Խօջամիրեանից և կոյս Շուշանիկ Խարազեանից ի յիշատակ կոյս Իշխանուհի Ամատունու 10 ր., հոգեհացի փոխարէն, և տիկ. Ռ. Ս. Իսահակեանից 10 ր. ի յիշատակ իր քրոջ՝ Ն. Բուղդանեանի, պակի փոխարէն։

◆ «Р. Знамя» թերթը պետական Դումայի անդամներ Զիլիձէէն և Սկօբելեվին մեղադրում է Բաքուի նաւթային բանուորների գործադուլը կազմակերպելու մէջ։

◆ Մեղրիից մեզ գրում են. «Մեզանում սկսված է այգեկութը։ Խաղողի պուդը ծախվում է 60—65 կ., դեղձը 70—80 կ.։ Առատ միրգ կայ, բայց արտահանելու շուկայ չը կայ, վատ հաղորդակցութեան պատճառով»։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂ ԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Արքունական Թատրոն

Գեղարուեստական հաճոյք պատճառեց «Ալիզ» օպէրայի ներկայացումը չորեքշաբթի, սեպտեմբերի 18-ին։

Իր բարդութեամբ, Վէրդիի այդ տաղանդաւոր երկը պահանջում է կարող դերակատարներ ձայնական և բեմական տեսակէտից, և պէտք է ասել, որ անսամբլը միանգամայն աջող էր։

Համանուն Ալիզայի նուրբ հոգեբանական դերում հանդէս եկաւ Թիֆլիսի երաժշտասէր հասարակութեան սիրելի երգչուհի Ա. Լէշկօն, որի հոյակապ խաղը՝ մտածված ու բնական՝ թատրոնը լցրած բազմութեան ջերմ խանդավառութիւնը յարուցեց։

Առաջին անգամ հասարակութիւնը տեսաւ Փարաւօնի աղջիկ Ամնէրիսի դերում ներկայ օպէրային խմբի նոր ոյժ ա. Վասէնկովա։ Թէև դժուար է առաջին անգամից որոշ եզրակացութիւն անել այս երգչուհու մասին, սակայն բացորոշ է այն, որ նա ունի ախորժելի ու մշակված մէցցո-սոպրանօ։ Խաղը ներշնչված էր հարազատութեամբ ու թողեց ցանկալի տպաւորութիւնը։

Ալէշկոյի արժանաւոր պարտներ հանդիսացաւ երգիչ Գրիցէնկոն (Բադամէս)։ Հարուստ ձայն (դրամատիկ. տէնօր), կանոնաւոր ինտոնացիա, զգացված արտայայտութիւն—ահա այն պլուսները, որոնք միասին այս երիտասարդ երգչին դնելու են Լազարէվի նման պրեմիէր արտիստների շարքում։ Քանիցս տեսած ենք Բադամէսի դերում Լազարէվին, որի տաղանդաւոր խաղը անուրանալի է, սակայն սխալված չենք լինի, եթէ ասենք, որ Գրիցէնկոն նոյնպէս շնորհալի Բադամէս է։

Աջող էին նաև Դէմիդօվը՝ Փարաւօնի և Տարնօվսկին՝ Ամիդայի հայր Ամոնասրոյի դերում։ Վերջինիս ձայնը հնչում է յստակ, իսկ շարժումները՝ վստահ։

Բալէտային մասում ի միջի այլոց կատարվեց առաջին անգամ քուրմերի պարը պլիսա-բալէրինա տ. Բաուէրզակի մասնակցութեամբ։ Առհասարակ բալետը ընդհանուր կերպով բաւարար էր։

Ինչ վերաբերում է դեկորացիաներին, բեմադրութեան և զգեստներին, այդ ամենը միայն գովասանքի արժանի են, և Թիֆլիսի համար աւելին չէ պահանջվում։ Պատիւ է բերում խմբին, որ այս տարի ունի Նիկոլաևի նման հմուտ և ձեռնհաս բեժիսեօր։

Իվ. Պալիէվն օրէկտորը և խումբը տարաւ պատշաճ համակերպութեամբ, միայն ջանալու է դպել օրէկտորի՝ սօլիստների բարձր բեղիսորը խլացնելու տենդենցը։

Այսօր առաջին անգամ այս սեզօնում կը տրվի «Տրաւիատան»։ Ե.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, 11 սեպտեմբերի

Էջմիածնի սինօդը, մօտ տասը տարի առաջ կատարված մի իրողութեան համար, մի բաց առաջադրութիւնով հրամայել է թեմիս առաջնորդին արձակել ինձ կօնսիստօրիայի գործավարութեան պաշտօնից՝ պատճառաբանելով թէ ես հայհոյել եմ հոգևոր իշխանութեանը։

Այդ հրամանը, որպիսին դարձնած է երդել թեմիս առաջնորդի դեռ Էջմիածին գտնված ժամանակ, վերջինիս կողմից մեծ եռանդով ի կատար է ածվում և չը նայած իմ երեսուն տարվայ (16 տարի կօնսիստ. գործավարութեան և 14 տարի ուսուցչութեան) անբիծ ծառայութեան, ես, ծանրաբեռնված մեծ գերդաստանով, փողոց եմ շպրտվում առանց մի կօպէկի։

Որպէսզի հասարակութեան համար աւելի պարզ լինի գործի էութիւնը և հոգևորականի օխակալութեան ամբողջ թափը, ստորև դնում եմ գործի անհրաժեշտ մանրամասնութիւնը։

1906 թ-ին Թիֆլիսի հայոց կօնսիստորիայի ծառայողներն ես, ի թիւս այլոց, իրանց մտահոգիչ վիճակը բարւոքելու համար գործադուլ արին։

Անմոռանչ դատները խօսել էին. և ահա մեր հոգևոր հայրերի նիստը խանդարելով՝ նրանց ոսը իր ամբողջ թափով երևան եկաւ, որպէսզի արտայայտվեց նրանով, որ կօնսիստորիայի ամբողջ կազմը դատի մատնեցին։

Ինչպէս կօնսիստորիայի ծառայող, ես ևս մատնված էի դատի, բայց որովհետև ինձ համար, ինչպէս նախկին ուսուցչի, աւելի թանգ էր իմ պատիւը, քան հոգևոր իշխանութեան այն անդամները, որոնք բաղդի բերմունքով այդ ժամանակ գլուխ էին անցած, ես դատական քննիչի մօտ իմ ցուցմունքի մէջ թոյլ տուի ինձ հոգևոր իշխանութեան հասցէին մի քանի վիրաւորական խօսքեր ասելու (1908 թ.)։

Այդ վիրաւորական խօսքերը կայանում էին նրա մէջ, թէ հոգևոր իշխանութիւնը իր բարձրութեան վրա չէ կանգնած, որ նա օրէնք, խիղճ չէ ճանաչում, որ նրա անդամներից ոմանք սիմոնականութեամբ են պարապում և այլն։

Եւ որպէս զի վերոյիշեալ խօսքերս քննութեան առնվեն, ես մի առանձին բողոքով յանուն կառավարիչ սենատի՝ դիմեցի Էջմիածնի սինօդին, որպէս զի այդ իմ բողոքը ուղարկվի Պետերբուրգ. սակայն սինօդը 1909 թ. յունվարի 12-ին № 52 հրամանի հետ վերադարձնելով այդ բողոքը՝ յայտնում է ինձ, թէ չէ կարելի այդ տեսակ բողոքը ուղարկել։

Մինչ այդ՝ դատախազն էլ սինօդի կողմից մեր դէմ յարուցված գործը քննելով և չը գտնելով ոչ մի յանցանք, գործը կարճում է և յանձնում սինօդին ի պահպանումն։ Անցնում են տարիներ։ Ես ևս, չուզենալով հին, ժահրոտ վէրքերը քրքրել, սինօդի անուշով իմ բողոքը պահում եմ ինձ մօտ, յույս դնելով թէ հոգևոր իշխանութիւնն էլ ամեն ինչ մոռացութեան է տուել։

Բայց եկէք տեսէք, որ հոգևորականի «ոխը» մոռանալ չը գիտէ, որ Քրիստոսի այդ փոխանորդների սև կիրքը չէ հանգչում նոյնիսկ այն ժամանակ, երբ նրանց ասում էք, թէ նրանք ոչ օրինական, և ոչ մարդկային իրաւունք չունեն այժմ այդ հարցը շօշափելու և իրանց ստորադրեալի հետ այդպէս անխղճօրէն վարվելու, քանի որ ոչ պետական օրէնքն է այդ թոյլատրում և ոչ բարձրագոյն մանիֆէստը։

Հոգևոր իշխանութեան այդ անիրաւ վարմունքի դատաստանը հայ բանտմաց հասարակութեանը թողնելով՝ ինձ եմ վերապահում բողոքել ուր հարկն է այդ գործին օրինական ընթացք տալու և պահանջելու իմ 16 տարվայ կաթիլ-կաթիլ թափած արիւն քրտինքիս գինը, իմ երիտասարդ թարմ ոյժերիս վարձը և իմ անբիծ պատիւս վերականգնումը...

Խնդրում եմ միւս թերթերին արտատպել այս գրութիւնս։ Բ. Այվազեանց

—

Թիֆլիս, 17 սեպտեմբերի

Ս. Մինասի դպրոցի հոգաբարձութիւնը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը բժշկ. Յովհաննէս Իգիթեանին, որ նա յօգուտ իր խնամքին յանձնված դպրոցին նուիրեց 100 ր. ի յիշատակ իր հօր, նոյն եկեղեցու միաբան նորոդ հանգուցեալ Սարգիս ա.-ք. Իգիթեանի։

Ի դիմաց հոգաբարձութեան՝

Ա. Էլիզբարեան

—

Լօնդոն, 6 սեպտեմբերի

«Մշակի» № 183-ում լոյս էր տեսել Մշեցու մի թղթակցութիւնը Բիթլիսից գրված՝ Էրզրումի անգլ. ընդհ. հիւպատոսի այդ քաղաքը այցելելու և այդտեղի առաջնորդի կոպիտ վերաբերմունքի վերաբերմամբ։ Հասարակական մի հարց է դա, որի զանազան երևոյթների և նրանց թողած տպաւորութիւնների և հետևանքների մասին արժէ անդրադառնալ։

Ես առիթ ունեցած եմ հանդիպելու Բիթլիսի առաջնորդ Սուրէն վարդապետին, որ վաղուցուց գործունեայ և խոստմնալից մի անդամ կարող է լինել հայ հոգևորականութեան շարքին, եթէ նա այժմից զիջի նկատի առնել ժողովրդական իրաւացի քննադատութիւնները։ Նա իբր ապարէշ ունի Բիթլիսի պէս բարոյական, կրթական ու հոգեկան կարիքների մի ովկիանոս, ուր ապահովաբար կարող է գործածել իր եռանդը և աշխատանքը ի նպաստ այդ նահանգի թշուառ ժողովրդին։ Սակայն ցաւալի է ասել թէ, որչափ ես կարողացայ ճանաչել նրան, Սուրէն վարդապետը բացարձակապէս զուրկ է հայրենասիրական ու մարդկայնութեան այդ խանդավառութիւնից։ Նա Բիթլիսի առաջնորդական պաշտօնը ծառայեցնում է որպէս մի պատուանդան՝ բարձրանալու եպիսկոպոսութեան և յետոյ վայելելու Կ. Պոլսի գեղեցիկ ափերը։

Ցանուն Բիթլիսի հայ տառապած հասարակութեան ես համարձակում եմ խնդրել Վեհ. Կաթողիկոսից և Կ. Պոլսի սրբազան պարիարքից նկատողութեան առնել այդ հանգամանքը և իբրև վարձատրութիւն՝ եպիսկոպոսական կարգին, պայման դնել Սուրէն վարդապետի և այդպիսիների համար անվրէպ 8—10 տարվայ օգտակար և մաքուր ծառայութեան հայկական կենտրոններում. թերևս դա կը լինէր մի միջոց՝ օգտվելու որոշ չափով ուսած և կրթված երիտասարդ վարդապետներից և դրանով տակաւ բարձրացնել նաև հոգևորականութեան որակը այդ յետ ընկած նահանգներում։

Էրզրումի անգլիական հիւպատոս Մօնահանի Բիթլիսի հայերից դժգոհ մնալու հարցի վերաբերմամբ կարող եմ ասել, թէ բարեբաղդաբար այդ փորձառու իրլանդացին շատ լաւ է ճանաչում հայ գիւղացուն և հայ մարդուն։ Նա հայ գիւղացուն տեսել է 94—96-ի Ջարդերի ժամանակը և ծանօթ է նրա հոգեկան ու ազգային ընդունակութիւններին։ Ապահովաբար կարելի է ասել, թէ Սուրէն վարդապետի կոպիտ վերաբերմունքը շատ էլ չէ ազդում իրլանդացու հայերի հանդէպ մնացած կարծիքների վրա։

Վանդը պիտի որոնել աւելի բարձր շրջաններում,—թիւրք կարիսեսի հայ անդամներ՝ անգլիական դիպլոմատների վրա թողված տպաւորութիւնների խորքում։

Այդ մասին ես կը գրեմ մի ուրիշ առիթով։ Aequitas

—

Գօրի, 15 սեպտեմբերի

Պարոն Գրիգորի մահվան մասին «Մշակի» հաղորդած լուրը աչքերիցս արտասուքի կաթիլներ քամեց։ Բացվեց աչքիս առաջ իմ նրա հետ ունեցած յարաբերութեան 50 տարվայ պատմութիւնը։ Երբ Թիֆլիս էի հանդիպում, իմ առաջին բարոյական պարտականութիւնս էի համարում մտնել Ներսիսեան դպրոց, տեսնել իմ կրթութեան որրանը և հոգևոր ծնողիս՝ Պարոն Գրիգորին և նորից կազդուրված, նորից հոգևոր ծնողիցս ամրապնդված և զուարթացած դուրս էի գալիս կանգի ասպարէզ։ Պարոն Գրիգորը առ հասարակ սովորութիւն չունէր նամակագրութեան. բայց նայեցի թղթերիս և երեք հատ նամակ գտայ, որոնցից մինը հետևեալն է, գրված՝ 1891 թ. նոյեմբերի 28-ից.

«Ձեր նամակն ստացայ. ահա և պատասխանում եմ։

«Մ[illegible]թէ կասկածում էք, որ ձեր որդին կարող էր անտէր լինել. առանց մեկնելու գրում եմ, հաւատացած եղէք և անհոգ այս զաւակի կողմից. իր ձեռագիր նամակն և թուղթը, որ ուղիղ է, ուղարկում եմ ձեզ ապահովութեան համար։

«Որքան երջանիկ եմ, որ զաւակի զաւակին եմ հովանաւորում. որքան ապաբաղդ եմ, որ հայրը թերահաւատ է առ իս և նեցուկ է որոնում։ Ցիրուհոն բարև։

«Ձեզ միշտ սիրող՝

«Գ. Տէր-Յարութիւնեան»։

Վերոգրեալ նամակից պարզ հասկանալի է, թէ ինչպիսի սիրով կապված էր հանգուցեալը իր սիրած գործի հետ, իր սաներների հետ և առ հասարակ իր խնամքին յանձնված դպրոցի աշակերտութեան հետ, և որ պատրաստ էր առանց ձանձրանալու հնարաւորը անել։ Ինչպիսի՜ առանձին բաւականութեամբ և շեշտով գրում է՝ «որքան երջանիկ եմ, որ զաւակի զաւակին եմ հովանաւորում»։

Պարոն Գրիգորի մահվամբ հաղարաւոր սրտեր են հառաչում և ողբում այդ անփոխարինելի կորուստը։

Սահակ ա.-ք. Խաչանեան

—

ՄԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԴՐԱՄԱՏՈՒՐԳՆԵՐԻՆ ԵՒ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԻՆ

—

Տարիներից ի վեր սովորութիւն է դարձել հայ դերասանների համար խաղալու հայերէն պիէսները ոչ միայն առանց որևէ հօնորար վճարելու հեղինակներին ու թարգմանիչներին, այլ նոյնիսկ առանց նրանց հասարակ համաձայնութեան ու թոյլտուութեան։ Հայ դրամատուրգն ու թարգմանիչը իր տաժանելի աշխատանքի համար ոչ մի վարձատրութիւն չեն ստանում և շահագործվում են՝ մարդ չը գիտէ յանուն ինչի։

Եթէ դեռ դերասանական խմբերի մասին ոչինչ չէ կարելի ասել, ապա ինչ ասել անհատ դերասանների ու սիրողների մասին, որոնք շարունակ օգտվում են հայ հեղինակ-

ների ու թարգմանիչների աշխատանքից, շահագործում են այդ աշխատանքը յօգուտ իրանց գրպանի։

Օրինակ Բագուում և նրա բայօններում սեպտեմբի ընթացքում արվում է հայերէն ոչ պակաս 100—150 ներկայացում, որոնց օ՝գուտը մեծ մասամբ մնում է այդ ներկայացումները կազմակերպողների գրպանը և հեղինակների հաշիւ 1—2 տոկոսն է հնարաւոր ստանում։

Կամենալով այդպիսի շահագործման առաջը որոշ չափով առնել, ես ինձ վերա՝ եմ վերցնում հայ դրամատուրգների և թարգմանիչների ներկայացուցիչ լինելը Բագուում և նրա բայոններում, ուստի խնդրում եմ բոլոր հայ դրամատուրգներին և թարգմանիչներին, որոնք կը համաձայնվէին իրանց պիէսների իրաւունքը տալու ինձ, ուղարկէին հաւատարմաթուղթ, կամ պաշտօնական նամակ, և յայտնէին թէ ինչ պայմաններ են դնում իրանց պիէսները թէ ընդհանուր և թէ ժողովրդական բեմերի վրա խաղալու համար, և իրանց հասցէները։

Ստացված հնարաւորից 20% ես կը վերցնեմ անդորրագրերի և այլ ծախսերի համար, իսկ մնացած գումարը անմիջապէս կը վճարեմ ըստ պատկանելոյն։

Այդպիսով մենք հայ հեղինակների աշխատանքը շահագործելու առաջը առած կը լինենք գոնէ Բագուում, որը ապագայում օրինակ կը ծառայէ և այլ տեղերի համար։

Իմ հասցէն՝ Баку, почтовый ящикъ № 260.

«Մշակի» աշխատակից՝

Վաղարշակ Թումանեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

— Կ. Պոլսից հեռագրում են, որ սուլթանի առողջական դրութիւնը լուրջ երկիւղ է ներշնչում. լուրերի համաձայն՝ նա անդամալոյծ է դարձել։

— Ալբանները սերբերից խնդրեցին 10 օրով զինադադար սահմանները որոշելու համար։ Սերբերը մերժեցին և սկսեցին ընդհանուր արշաւանք։

— Կիչեվի և Մավրովի միջև 6000 ալբան չարդ կերան սերբերից։ Նրանց թնդանօթներն ու գնդակոցիները խլվեցին։ Սերբական զօրքերը դիմում են դէպի Դիբրը։

— Յոյն-թիւրքական բանակցութիւնները մօտ են խզման։ Յունաց զօրքը կազմ ու պատրաստ հրամանի է սպասում արշաւելու։

— Աղրիանուպոլսի թիւրք զօրքերի մէջ սկսվել է յուզմունք։ Երկիւղ կայ, որ ապստամբները դիմեն Կ. Պոլսի վրա։

— Ցէտինիէում տեղեկութիւն է ստացվել, որ ալբաններից խլված թընդանօթների վրա եղել է բուլգարական դրոշմ։

— «Н. Вр.»-ին հեռագրում են Թէհրանից, որ դեմօկրատները պահանջում են փոխել կաբինէտը, որ, նրանց կարծիքով, կաշառակեր է։

— Գերմանական ժող. լուս. մինիստրը պատուիրագրեց Բերլինի համալսարանի վարչութեանը՝ չընդունել այս ճեմարանական տարում ռուսահպատակների։

— Բուլգարական զօրքերի մէջ հրէաներին գնդակահարում և զանազան տանջանքների են ենթարկում։

— Պետերբուրգի «Լոյս» բանւորական ընկերութեանը իշխանութիւնը արգելեց դասախօսութիւն կազմակերպել թոքախտի և Տուրգենեվի մասին։

— Մայրաքաղաքի լրագիրների ասելով, լուրեր են պտտվում, որ Պետերբուրգի համալսարանի լաւագոյն բժիշկներին տեղափոխելու են Իւրիէվ։

— Բրիւսէլի խոշոր արդիւնաբերող Սոլվէյը իր հիմած ֆիրմայի գոյութեան 50-ամեակի առիթով մօտ 10 միլիոն ֆրանկ նուիրեց զանազան հասարակական ու բարեգործական նպատակների։ Այսպէս՝ 3 միլիոն ֆրանկ նա նուիրեց ծառայողների և բանւորների գանձարկղին, որին ֆիրման մի անգամ արդէն ընծայել էր 3 միլիոն ֆրանկ։ Մի միլիոն ֆրանկ յանձնվեց Բրիւսէլի բժիշկ Բարնիշին, բանւորական տարբեր հաստատութիւնների համար։ Պարիզի և Նանսիի համալսարաններից ամեն մինը ստացաւ կէս միլիոն, քառորդ միլիոն՝ Շարլէրուի էլեքտրոտեխնիկական ինստիտուտը, 300 հազար ֆրանկ՝ Բրիւսէլի արուեստների հիւանդանոցը, 100 հազար ֆրանկ՝ թոքախտի դէմ մաքառող Բրիւսէլի ընկերութիւնը։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

18 սեպտեմբերի

ՊԵՐՊԻՆԵԱՆ։ Պաշտօնական թերի համաձայն, Սերբերի դժբաղդութեան ժամանակ սպանվել են 14, վիրաւորվել են 30 մարդ։ Պատճառը սպիրտի պայթումն է եղել։

ԿԻԼՎ։ Կայարանի մօտ սպանվեց Կօրիւկովի գործարանի դրամատար Սակսօնովը, որի մօտից յափշտակվեց 40,000 բուբլի։ Ոստիկանական շների օգնութեամբ մօտակայ «Ամերիկա» հիւրանոցում ձերբակալվեց ոմն Սլէպակովսկի, որ համար էր վերցրել սպանութիւնից էլէ ժամ յետոյ։

ՄԱԴՐԻԴ։ Ամբողջ Սպանիայում ուժեղ հեղեղներ են։ Երկաթուղային հաղորդակցութիւնը Հարաւային Սպանիայում դադարել է։ Մի քանի մարդ խեղդվել են Ջրում։ Բերքը ոչնչացված է։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Պալատը 254 ձայնով ընդունեց մասնաժողովի զեկուցագիրը տարիֆային բիլլի մասին։

ՐԻԳԱ։ Սօց.-դեմ. գաղտնի ժողովում կալանաւորվեցին 18 տղամարդ և 4 կին։

ԱՐԽԱՆԳԵԼՍԿ։ «Օլգա» նաւը վերցրեց «Ֆօկի» նաւապետ Զախարովին, որի ասելով Սէդովը և նրա բոլոր ուղեկիցները առողջ են։ Զախարովը Նրանց հրաժեշտ է տուել յուլիսի 29-ին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Օդեսայի գաւառում սեպտ. 14-ին մեռել է խոլերայից մէկը, Դնէպրովի գաւառում սեպտ. 13—16 մէկը, Պոլտաւայում մէկը, Բեսարաբիայի գաւառում մի հոգի։

ԱՍՏՐԱԽԱՆ։ Փակվեց ձկնարդիւնաբերողների համագումարը։

ԻՕՀԱՆՆԻՍԱԼ։ Սարլատնիկը չորս մարդու հետ բարձրացաւ 2080 մետր և սահմանեց նոր մրցակէտ։

ԼՕՆԴՕՆ։ Դժբաղդ պատահարից ծուլն ընկաւ և խեղդվեց ինժենէր Դիզէլը՝ շարժիչ մեքենաների հնարողը։

ԽԱՌՆ ԼՈՒԻՐԵՐ

ԱՑԼ ԵՒ ԱՑԼԻՔ

— Ընդամենը մի քանի ամսում երեք հռչակաւոր գիտ արած պրոֆ. Խիդէյօ Նոգուչին ներկայացնում գտնվում է Եւրոպայում։ Նա ծնվել է Եապօնիայի ծայր հիւսիսում Ակիդուի գաւառում. նա միջահասակ է, 38 տարեկան։ Բժշկական կրթութիւնը ստացաւ Եապօնիայում, ուր դարձաւ ասիստէնտ Եւրոպայում յայտնի երկու դիտականներների՝ Կիտասատոյի և Էրլիխի։

Նոգուչի ձախ ձեռքը փչացած է։ Նա շարժելու ընդունակութիւնը կորցրեց դեռ երեխայութիւնից՝ վառոդի հետ խաղալիս։ Ձեռքի չորս մատները կտրված են, բթամատից մնացել է միայն յօգը։ Սակայն հնարագէտ եապօնացին կարողանում է օգտվել մի կերպ այդ ձեռքով ևս՝ աշխատելով վերցնել գործիքները ափով և մնացած միակ մատով։

Ութ տարի առաջ Նոգուչին տեղափոխվեց Ամերիկա, հրաւիրվելով նախ Պէնսիլվանիայի հանրա սրանը, իսկ յետոյ Ռօկֆէլլերի ինստիտուտը։

ԹԱՌՆ ԼՈՒԻՐԵՐ

ԱՑԼ ԵՒ ԱՑԼԻՔ

— Ընդամենը մի քանի ամսում երեք հռչակաւոր գիտ արած պրոֆ. Խիդէյօ Նոգուչին ներկայացնում գտնվում է Եւրոպայում։ Նա ծնվել է Եապօնիայի ծայր հիւսիսում Ակիդուի գաւառում. նա միջահասակ է, 38 տարեկան։ Բժշկական կրթութիւնը ստացաւ Եապօնիայում, ուր դարձաւ ասիստէնտ Եւրոպայում յայտնի երկու դիտականներների՝ Կիտասատոյի և Էրլիխի։

Նոգուչի ձախ ձեռքը փչացած է։ Նա շարժելու ընդունակութիւնը կորցրեց դեռ երեխայութիւնից՝ վառոդի հետ խաղալիս։ Ձեռքի չորս մատները կտրված են, բթամատից մնացել է միայն յօգը։ Սակայն հնարագէտ եապօնացին կարողանում է օգտվել մի կերպ այդ ձեռքով ևս՝ աշխատելով վերցնել գործիքները ափով և մնացած միակ մատով։

Ութ տարի առաջ Նոգուչին տեղափոխվեց Ամերիկա, հրաւիրվելով նախ Պէնսիլվանիայի հանրա սրանը, իսկ յետոյ Ռօկֆէլլերի ինստիտուտը։

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բժշկ. Բ. Ղաւասարդեանի

Հիմնված 1880 թ.

(Կուկա, Զօրանոցների արձանի հանդէպ)

Սահեն or, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ 11—12 ժ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վիներական (սիֆիլիս) հիւանդութիւն։

Բ. Գ. ԱՂԱՍԵՐԵԱՆ—1—2 ժ. ներքին և երեխայոց հիւանդութ.։

Կ. Մ. ՁԻՆՕՎԱՆԻ—9½—10 ք ժ. աչքի, ներքին և նեարդային հիւ.։

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.։

Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւանդութ.։

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վիներական, վիրաբուժութեան և միզասեռ. հիւ.։

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկատաս.։

Կ. Գ. ԳՈՒՐԳԵՆԻՋԷ—1—2 ժ. ներքին, երեխայոց հ. և ծաղկատաս։ Սրտան, մէզի, խուխի հետազօտութիւն։

ԳԻՆ-ԲԺՇԿՈՒ ՏԷՐ-ԳԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։

Կ. Գ. ԳՈՒՐԳԵՆԻՋԷ—6—7 ժ.

Վճարը 50 կ.։ Զքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ Բ. Ղաւասարդեան

1. 0—90

Խմբագիր-հրատարակիչ՝

Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Հրատարակիչ՝ Ալ. ՔԱԼԱՆԹԱՐ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գանձակի հայոց հոգևոր կառավարութեան համար հարկաւոր է

մի հմուտ քարտուղար,

որ պիտի տիրապետէ հայ և ռուս լեզուներին։ Տարեկան ռոճիկն է 600 ր.։ Ցանկացողները կարող են դիմել Գանձակի հոգևոր կառավարութեան, ներկայացնելով ուսման և ծառայութեան վկայականները մինչև սեպտեմբերի վերջը։

787. 4—3

Լոյս տեսան նոր տպագրութեամբ

ՅՈՎՀ. ԱՐԱԲԱՋԵԱՆԻ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

Ա., Բ., Գ. և Դ. տարվայ դասագրքերը։

Հաւանութիւն գտած են Կովկասի ուսումն. շրջ. հոգաբարձ. խորհրդի կողմից և ընդունված բազմաթիւ դպրոցներում՝ իբրև օգտակար և հեշտ ուսանելի դասագիրք։

Գումարով գնողներին զեղչ։

Դիմաւոր պահեստը Թիֆլիսում «ԳՈՒՏԵՆԲԵՐԳ» գրավաճառանոցում։

Կազմողի հասցէն՝ Александ рополь. Ов Ал. Арабаджіану.

(օ. մ.) 704. 10—10

Հ. ուսման փոխանորդութեան **Զօրոյ** եւ **Միրզաբէկոյ** միացեալ թուրքախօս հայ գիւղերի միդասեան հայոց դպրոցի համար

ՀԱՐԿԱՒՈՐ Է

մի փորձված միջնակարգ կրթութեամբ թուրքախօս

ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉ

300 ր. ռոճիկ, բնակարան, վառելիք, լուսաւորութիւն և ծառայ։ Ցանկացողները դիմեն Нуха, архимандриту Егише Агаронянцъ։

707. 3—2

„Մշակի" խմբագրատուներ

վաճառվում են

ՀԵՏԵՒԵԱԼ ԹՍՏԵՐԱԿԱՆ ԵՐԿԵՐԸ.

1) Հասարակութեան Նեցուկները, Հ. Իբսէնի, թարգ. Լ. Բարայեանի 50 կ.
2) Նոր կեանքի շեմքում, դրամ. էպիլոգ գաւառ. կեանքից, Ա. Բ-ի 40 կ.
3) Նշանվածներ, պիէս 3 գործ., Ալ. Աբելեանի . . . . . 60 կ.
4) Ուսանողներ, 3 գործ., Գ. Բաշինջաղեանի . . . . . 50 կ.
5) Կայէնի ճանկերում, դրամա 5 գործ. Ա. Առաքելեանի . . . 50 կ.
6) Մազդա, դրամա, 5 գործ. Լևոն Մանուէլեանի . . . . . 40 կ.

Նրանք, որոնք այս գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից փողը կանխիկ վճարելով, կը ստանան 25% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վճարով պահանջողներին կը լինի միմիայն 15%։

Հասցէն՝ Ред. газ. „Мшакъ", Тифлисъ.

(4) 10—9

ՆՈՐ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՄԲ

Լոյս են տեսել եւ վաճառվում են ամեն օրեր

— կ ա զ մ ե ց ի ն —

ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆ, ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ եւ Լ. ՇԱՆԹ.

ԼՈՒՍԱԲԵՐ

Ա. տարի եօթերորդ տիպ, գինն է. . . . 30 կ.
Բ. տարի եօթերորդ տիպ, գինն է. . . . 45 կ.
Գ. տարի վեցերորդ տիպ, գինն է. . . . 55 կ.
Դ. տարի հինգերորդ տիպ, գինն է. . . . 65 կ.

Պահեստը «ԳԻՐ» գրախանութում։ Դիմել՝ Тифлисъ, кн. магазинъ «ГИРЪ».

(օ.մ.) 801. 2—1

Յ. Ա. ՏԷՐ-ԳԱՍՊԱՐԵԱՆՑ եւ ԸՆԿ.

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ

ՓՈԽԱԴՐՎԵՑ

ԳՕԼՕՎԻՆՍԿԻ ՊՐ. № 23, տ. Մ. Ադամեանցի, Բօյարսկի հիւրանոցի ներքևում. Տելեֆօն № 12—67.

Առևտրական Տունն ունի էլեքտրական բազմատեսակ արմատուր նոր ձևերի, բրօնզեայ, ճենապակեայ և այլ տեսակի ֆիգուրաներ, ծաղկի և մրգեղէնի համար վազեր։ Էլեքտրական ինքնաեռներ, թեյամաններ, սրբարաններ, թասեր, կաթսաներ, պլիտկաներ, ուրթներ և այլն։ Շքեղ թանաքամաններ, բլօկ-նոտեր, ալբոմներ, լուսանկարների համար շրջանակներ ու շրջանակներ և բազմաթիւ գեղեցիկ առարկաներ։ Էլեքտրական լուսաւորութիւն անցկացնելու համար ամեն տեսակ պարագաներ։ Էլեքտրական զանգակներ և նրանց վերաբերեալ բոլոր պատկանելիքներ։ Կէրոսինի լամպաներ, խոհանոց և սպիրտօվկաներ ամեն տեսակի։ Առաջնակարգ ֆիրմաների էլեքտրական ճրագներ, որոնք ամտեսում են 75%։ Էլեքտրական հաշուեցոյցներ՝ մշտական և փոփոխական տոկի։ Ֆիրման ստանձնում է էլեքտրական լուսաւորութիւն անցկացնելու ամեն տեսակ աշխատանք։ Պարբերաբար ստացվում են էլեքտրական նոր արմատուրներ։ Մեծ քանակութեամբ գրպանի և ձեռքի էլեքտրական լապտերներ բարձր տեսակի։

ԳՆԵՐԸ ԱՌԱՆՑ ՍԱԿԱՐԿՈՒԹԵԱՆ

(ա. օ.) 802. 3—1

Առևտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող

Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ

Թիֆլիս, Միքայէլեանց պր. 24/4. Տելեֆօն № 976.

Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։

Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ։

Գործնական զրպմունքները կատարվում են կուրսերում՝ Լօնդօնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster-Comptoir-ում։ Նրանցներն են. ա) պարտադիր. 1) Հաշուապահութիւն (պարզ, իտալ., դեմ., ֆրանս., ամերիկան, բանկային և գործարանական). 2) Առևտրական թղթակցութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնագրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Թարգմանութիւն համրիչի վրա. 7) Գայթչագրութիւն, տրագրագրութիւն (ամենամա ձեռքի ուղղումն). բ.) ոչ-պարտադիր. 1) Ռուս լեզուներ. 2) Գրագրութիւն. 3) Դակտիլոգրաֆիա (բեմինգտոն և ուր. և 4) Առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով։ Զրաղմունքները կատարվում են և դատ-դատ։ Ունկնդիրների թիւ շատութեան պատճառով բացվում է երկրորդ կուրսը թաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտարաքաղաքացիների համար։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին։ Ինդիրների ընդունելութիւնը առ. ժամը 10—12-ը և երկ. 4—7-ը։ Ծրագիրը և կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում։ Կուրսերը ֆիրմաներին յանձնարարում են հաշուապահներ, օգնական նոներ և առևտր. այլ ծառայողներ՝ կուրսերի ընթացաւարտներից և իրանց ընդունակութեամբ աչքի ընկնողներից։ (Ընթացիկ տարում կուրսերն ունեցել են 284 ունկնդիր, որոնցից 53 հոգի իգական սեռից)։

Կուրսերի հիմնադիր՝ Տ. ՓԻԼՕՅԵԱՆ

(ա. օ.) 556. 0—35

ՈՍԿԷ ԺԱՄԱՑՈՅՑ

բոլորովին հարկաւոր չէ։ Փոխ. 200 ր. արժեցող ոսկէ ժամացոյցի առաջարկում ենք անմիջական կերպով բերել տալ Բերլինից ֆրանս. նոր ոսկուց շնված ժամաց. «ԽՐՕՆՕՄԷՏՐ» անունով, որը թէ ձևի և թէ չքեղութ. կողմից չէ տարբերվում ոսկէ ժամացոյցից և արժէ 4 բուբ.։ Այդ ժամաց., թէ ոսամ. և թէ կանացին, շատ ապահ է, երկու փականներով՝ ծածկված էլեքտր. միջոցով 18 քարաան. ոսկէ հատ շերտով։ Ժամաց. մեխանիզմը ամենալաւ տեսակի է, քարերով, լարումը «Բէմօնտուար» 40 ժամը 1 անգամ և մինչև բոլորները ստուգված ընթացքով։ **Ուղիղ բաներ համար եւրոպական նեճ 10 տարով**։ Ժամաց. գինը 4 բուբ., 2 հատը՝ 7 ր. 50 կ., 4 հատը՝ 14 ր. 25 կ.։ Ով մեկանից բերել տայ այդ ժամաց., նա ընդմիշտ շնորհակալ կը մնայ։ Բերաքանչ. ժամաց. ՀՐԻ կցում ենք. 1) Տղամ. շղթայ նրկկողմ, կամ կանացի՝ պարանոցային, ֆրանս. իսկ. ոսկուց, 2) Բրելօկ-բլենօկ պարիկան հետաքրքր. տեսարաններով և 3) Զամշաչայ քարի ժամաց. համար։ ճանապարհածախսը, հանդերձ մաքով, 50 կ. (Սիբիր 75 կ.)։ Պատուէրները ճշգրիտ ուղարկվում են փոստագիր վճ. և առանց կանխավճարի։ Գրել կարելի է ամեն լեզուներով, հեռաձայ հասցէով, որը կարելի է այլասերել և կամ թէ գոտու կարել և ամուր կպցնել ծոցի ներսին (փակ նամակներին կպցնել 10 կ. մարկա, իսկ բաց նամակներին՝ 4կ.)։

Հասցէագրել

Berlin I. Strumfeld
Берлинъ. 124. Klosterstr. № 42

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆ! Պակտքներից խուսափելու համար յայտարարում ենք, որ մեր ժամացոյցները իսկական «ԽՐՕՆՕՄԷՏՐ»-ներ են և ցիֆերբլատի վրա զրված է «Բերլին ԽՐՕՆՕՄԷՏՐ»։

(29, հ. 9,15) (B. 49684) 4—1

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ իրաւունքներով և

ՀԱՇԻԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՁԱՔ. ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆԻ

Ընդունելութեան ժամերը.

Առ. ժ. 8-ից մինչև ցեր. ժ. 2-ը դպրոցում—I Тумановская № 13.

Երեկ. ժ. 5-ից մինչև ժ 8-ը կուրսերում - Михайловский пр. № 53.

ՀՐԱՒԻՐՎՈՒՄ Է ԱՌԵՒՏՐ. ԹԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՑԻՉ. 771. 10—9

ՀԱՇԻԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ

Գ. ԵՒ Մ. ՏԷՐ-ԱԻԹԵԱՆՆԵՐԻ

Նիկոլայեվսկայա, 36, Զօրանցօվի արձանի մօտ։ Ընդունելութիւնը երեկոյեան ժամը 4—7-ը։

613. 50—32

Ս.-Պետերբուրգի պետական կօնսերվատորիայի գեղարուեստական խորհրդի Դրուատման արժանացած

Հայ դպրոցների III և IV բաժանմունքների

ԵՐԳ-ԶԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ

Առաջարկում ենք մեր նոր լոյս տեսած

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՅԲԲԵՆԱՐԱՆԸ

Ա. մաս (դիատօնիզմ) — Գինը 35 կոպ.։

Դիմել բոլոր հայ գրավաճառներին։ Պահեստը «Գիր» գրախանութում։

ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔԵԱՆ, ԱԶԱՏ ՄԱՆՈՒԿԵԱՆ

(Ե.ու.կ.) 773. 6—5

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԷԹԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՑԻՆ ԿՕՆՍԻՍՏՕՐԻԱՅԻ

տատանում նշանակված է ներկայ սեպտեմբերի 23-ին, ցերեկվայ ժամը 12-ին

ԱՃՈՒՐԴ և երեք օրից յետոյ կրկնաճուրդ Թիֆլիսի Զորաբաշի ս. Գէորգ եկեղեցու գաւթում գտնված եկեղեցապատկան տան միջին և ներքին յարկը վարձով տալու համար. Ցանկացողները կարող են ծանօթանալ գրագրութեանց հետ կօնսիստորիայի գիւանատանում ամեն օր առաւօտեան ժամը 9-ից մինչև 2-ը։

Կօնսիստորիայի անդամ՝ ՍԱՐԳԻՍ ա.-ք. ՇԻՕՅԵԱՆ

Ատենադպիր՝ Մ. ՎԱՐԴՀԱՋԱՐԵԱՆ

798. 2—2

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица. домъ казенный